

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ ԳՐԱՔՆՆԱԴԱՏԸ*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բանալի բառեր՝ Եղիա Տեմիրճիպաշյան, գրաքննադատ, «Երկրագունտ», արվեստ, ժանր, պոեզիա, վեպ, հոգի, նյութ, ստեղծագործական ազատություն:

Նախաբան

XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության ինքնատիպ դեմքերից մեկը՝ գրող, իմաստասեր, խմբագիր, մանկավարժ Եղիա Տեմիրճիպաշյանը (1851–1908), բացի տարբեր ոլորտների վերաբերող տեսական հարցադրումներից, իր լրագրողական գործունեության ընթացքում, բնականաբար, զբաղվել է նաև գրական ընթացքի, գրական առանձին հրատարակությունների, գրողների ու նրանց արտահայտած կարծիքների նկատմամբ իր վերաբերմունքի, կարճ ասած՝ գրական քննադատության հարցերով: Ծիշտ է, դա այնքան էլ սրտամոտ չէր իրեն: Մի առիթով նույնիսկ անկեղծորեն խոստովանել է, թե «բանաստեղծութեանց վրայ գրել է հեշտագոյն է հոգւոյս բանաստեղծութիւն գրել»: Եվ դա հիմնավորում էր ստեղծագործական իր խառնվածքի առանձնահատկությամբ. «Ինձ ազատ հոգի՝ հողմավար գնալու մանաւանդ սահմանեալ ապաքէն ծանր է կասիլ, անդրադառնալ հողմոյն վրայ, նկրտիլ տարրալուծելու տիեզերաց շունչն, եւ համայն խագերն հողմոյն ուրոյն ուրոյն նշանակելու գրով ու թղթոյն վրայ հաստատելու», – գրում է նա՝ ի պատասխան «Ափոփանք ռամկին» իր բանաստեղծական ժողովածուի մասին կարծիք հայտնելու երիտասարդ բանաստեղծ Միհրան Հովհաննիսյանի խնդրանքին: Այնուամենայնիվ, չցանկանալով մերժել հեղինակին՝ տեղեկացնում է, թե «պիտի ջանամ բարեկամական իղձո լնուլ», միայն թե այն վերապահությամբ, որ «ներողամիտ պիտի լինիս անշուշտ, եթէ հարեւանցի իմն կատարեմ ա՛յն գործն, ում համակրութիւն չունիմ ...»¹:

Իրականությունն այն է, սակայն, որ ժամանակի մամուլում հայ գրական ընթացքի վերլուծությանը նվիրված Ե. Տեմիրճիպաշյանի բազմաթիվ հրապարակումները կարևոր ներդրում էին ազգային գրաքննադատական մտքի առաջընթացի ճանապարհին: Գրողի կյանքի և ստեղծագործության քաջագիտակ հետազոտող Ստեփան Թովմաշյանը նշում է, որ բազմակողմանի ձիրքերով օժտված Ե. Տեմիրճիպաշյանը «վիթխարի գործ է կատարել նաև քննադատության բնագավառում»²: Ըստ նրա, գրաքննադատության էությունն ու

* Ներկայացվել է 27. II. 2024 թ., գրախոսվել է 01. III. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:

¹ Ե. 1888, 468:

² Թ. ո փ չ յ ա ն. 1987, 122:

նշանակությունը «ավելի խոր և հիմնավոր» է ներկայացվում, մասնավորապես՝ գրողի կազմած «Փիլիսոփայական բառարանում», ուր «... կարևոր մի ճշտումով քննադատությունը հանվում է սպասավորի վիճակից. գրականությունը կանչքանա, ապա և կչքանա, եթե քննադատություն չլինի» (ընդգծումը մերն է – Պ. Դ.)³:

«Ի՞նչ է բանաստեղծությունը»

Մինչև գրական դասական կամ ընթացիկ գործերի ե. Տեմիրճիպաշյանի քննադատական վերլուծումներին ու գնահատականներին անցնելը, հարկ է, անշուշտ, դիտել, թե ի՞նչ էր հասկանում նա գրականություն, մասնավորապես՝ բանաստեղծություն ասելով, ո՞վ էր, ըստ նրա, գրողը, ստեղծագործող անհատը, բանաստեղծը: Այս հարցի շուրջ Եղիան արտահայտվել է զանազան առիթներով՝ մամուլում, նամակներում, նախապատրաստել է մի առանձին հետազոտություն «Ի՞նչ է բանաստեղծությունը» խնդրի շուրջ, որը, սակայն, չի հասցրել ավարտել և որից հրապարակվել է մեկ-երկու հատված միայն:

Դեռևս 1884 թ. «Առ առաւօտ» բանաստեղծության տպագրությունից առաջ, իր խմբագրած «Երկրագունտ» հանդեսի ընթերցողներին ներկայացնելով այդ քերթվածի հեղինակ, հանդեսի «նոր աշխատակից», երիտասարդ բանաստեղծ Հովհաննես Սեփյանին, Տեմիրճիպաշյանը նշում էր, թե «Գրական զբօսանքի հեղինակն այն բանաստեղծներն է, որք աչաց օժանդակութեան դուն ուրեք կը կարօտին, իրենց երգոց առարկայն ըլլալով մանաւանդ հոգւոյն յոյզերն ու սրտին վիշտերն քան արտաքին աշխարհին դէպքերն ու բնութեան տեսարաններն»⁴: Մի քանի ամիս անց, Պերպերյան վարժարանի մրցանակաբաշխության հանդեսի իր ճառում, նա հավաստում է, թե «... բանաստեղծին տունն երկրային անուշութեանց եւ երկնային ներդաշնակութեանց ժամատեղին է յաւէտ»⁵: 1887-ին կրկնում ու հաստատում է, թե «... ո՞վ որ գրականութիւն կ'ըսէ, կ'իմանայ լեզուի հետեւաբար ե՛ւ մտքի ճոխութիւն ու նրբութիւն, ազնուազոյն զգացմանց ու վեհազոյն մտածմանց արտայայտութիւն, երկրային եւ երկնային գեղեցկութեանց ցոլացում, ընկերական և հոգեկան կենաց բացատրութիւն, օրինաց ու բարուց աստիճանական բարւոքում ու կատարելագործում»⁶: Եվ դարձյալ՝ 1888 թվականին, վերն արդեն հիշատակված «Սփոփանք ռամկին» գրախոսականում Եղիան նկատում էր, թե «Արտաքին իրաց ու դիպաց պատկերացումն՝ ներքին յուսատարր տեսլեանց ցոլացմամբք, այս է բարձրագոյն բանաստեղծութիւնն»⁷:

1880-ական թվականներին ընթացիկ ելույթներում, քննադատական առանձին հրապարակումներում արտահայտված կարծիքները 90-ականի սկզբից արդեն Տեմիրճիպաշյանը փորձում է դնել առավել ծավալուն տեսական ձևակերպումների մեջ՝ իր գեղագիտական-քննադատական հայացքները հնարավորինս ամբողջացնելու նպատակով: Այս իմաստով առաջիններից մեկը 1891-ին

³ Թ. Դ. Մ. 1987, 123–124:

⁴ Տե՛ս «Երկրագունտ» (Կ. Պոլիս), 1884, թիւ 4, 188:

⁵ Գրական եւ Իմաստասիրական Շարժում (այսուհետ՝ ԳԻՇ). 1884, տետր իններորդ, 168:

⁶ Ե. 1887, թիւ 9–10, 404:

⁷ Ե. 1888, թիւ 10, 472:

«Արեւելք» օրաթերթում հրապարակված «Բանաստեղծութիւն եւ ամուսնութիւն» գրութիւնն է⁸: Այստեղ առաջին անգամ որոշակիորեն առաջադրում է «Ի՞նչ է բանաստեղծութիւնն» հարցը, որը նրա հրապարակումներում ամբողջ տասնամյակի ընթացքում կրկնվում է մի քանի անգամ: Պատահական չէ, որ Ե. Տեմիրճիպաշյանի տեսական այդ գրվածքները հրատարակիչները զետեղել են հենց «Ի՞նչ է բանաստեղծութիւնը» կամ «Բանաստեղծութիւնը» խորագրերի տակ՝ երբեմն նշելով, որ «Այսպիսի վերնագրով գործ չունի Եղիա Տեմիրճիպաշեանը»:

Կարևոր է ընդգծել, որ վերոհիշյալ հրապարակման մեջ Ե. Տեմիրճիպաշյանը «Ի՞նչ է բանաստեղծութիւնը» հարցը չի անջատում «Ի՞նչ է բանաստեղծական կեանքն» հարցից. այսինքն՝ ըստ էության, նա ստեղծագործական, բանաստեղծական էությունն ու բուն (առարկայական) բանաստեղծությունը ընկալում և դիտարկում է որպէս միասնական երևույթ: Ըստ այդմ դա «Զգայարանաց թափում թօթափումն է, հեշտին հալումն է սրտին. յարաթուիչ ճախրանքն է հոգւոյն՝ զմայլանաց աներեւակ աշխարհներուն մէջ»: Բերելով Բայրոնի «Մովսէսն» քերթվածի օրինակը, որն սկսվում է «Անդր քան ...» բառերով, Եղիան հաստատում է, թե «Բանաստեղծին կեանքն ալ կը սկսի տարանջատմամբ այսրին եւ անդրին», այսինքն՝ բանաստեղծն «անդրագոյնին կը տենչայ, անդրագոյնին մէջ կեայ, քանզի համակ հոգի է նա»: Բանաստեղծի էությունը, ըստ Եղիայի, չի կարող բավարարվել կամ պարփակվել սոսկ մարմնի, նյութի, երկրային կյանքի սահմաններում: «Մարմնոյն պիտոյքներն անգիտակցաբար կը գոհացնէ եւ ընտանեկան հոգերով ականայ կը զբաղի բանաստեղծն», — գրում է նա, որից հետո, սակայն, «... անուրջք մարմին կ'առնուն եւ ստուերք՝ կերպարան ու հոգի, ուր՝ ուր ուրեմն՝ աստեղատուններէն շնորհաթափող աննշմարելի քնադեղն անզգալաբար կը թմրեցնէ արարածն, որ հեշտակամ կը մտնէ ի ծոց քնոյ, — որ մահուանէն յետոյ՝ յերկնից առ մարդն պարգեւեալ բարեաց գերագոյնն է»: Ընդ որում, թյուրմբռնումներից խուսափելու նպատակով հարկ է համարում նաև տողատակում ծանոթագրել. «Աւելորդ է ըսել թէ բանաստեղծին տեսլականացեալ պատկերն է այս»:

Տեսական դատողությունների այս շարքն այնուհետև Եղիան շարունակում է երկու տարի անց՝ 1893-ին, իր նախկին աշակերտ Միքայել Աբխտողովին գրած նամակում¹⁰: Այստեղ արդեն բանաստեղծի հոգու գերակայության գաղափարը՝ արտաքին աշխարհի նկատմամբ, մարմնավորվում է բանաձևի ուժ ունեցող հետևյալ տողում՝ «Տիեզերքն իմ եսիս ընդմէջէն կը տեսնեմ»: Նա խոստովանում է, թե «Աստուծոյ ձայներն ու դաշտաց տեսարաններն երբեք ուղղակի չեն արձագանգ գտներ գրուածոյս մէջ. պէտք է հոգւոյս մէջ ցոլանան անոնք ...»: Ահա, թե ինչու ունեն արդէն հաստակ ու որոշակի համոզմունքը, թե «Անձնական խազն իմ քան հզօր է բանաստեղծական արտադրութեանցս մէջ»: Շարունակելով նյութի և հոգու թեման՝ Ե. Տեմիրճիպաշյանը գրում է՝ «Նկարագրական կամ զգայութեան բանաստեղծութիւնն այն է քնարերգական կամ զգացման բանաստեղծութեան՝ ինչ որ ոչ-եսն է եսին, ի՞նչ որ հունաւորն

⁸ Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 1891:

⁹ Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 2015, 426:

¹⁰ Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 2015, 360–362: Տե՛ս նաև Թէոդիկ. 1923, 62–64:

անհունին, ի՛նչ որ ստուերը՝ մարմնոյն»։ Եվ որպէսզի ավելի հասկանալի լինի գրական հանրութեանը՝ փոքր-ինչ ինտրիգային երանգով ավելացնում. «...ըսե՞մ, ի՛նչ որ Փանոսեան՝ Դուրեանին»։ Այլ խոսքով՝ Եղիան համոզված էր. «Կատարեալ, բարձրագոյն բանաստեղծութեան մէջ, բնութիւնն ո՛չ թէ կը գոհուի, այլ կը ստորադասուի։ Շարժումն, յուզումն, յափշտակութիւնն, Աստուած, հոգւոյն մէջն է, մարդկային եսին մէջն է. եւ այդ կենսաւէտ աղբիւրին մէջ է որ պէտք է լուսանայ ու կենդանանայ բնութիւնը՝ նախ քան արտայայտուիլն ի բանաստեղծութեան»։

Ըստ էութեան, Ե. Տեմիրճիպաշյանը տարբերակում է «հոգու» (որի խորքում բնութիւն-բնականն է) բանաստեղծությունը և «ձեւարուեստական հրաշակերտ» բանաստեղծությունը։ «Բանաստեղծութիւն մը, — գրում է նա, — պէտք է որ, կամ աւելի ճիշդ՝ բանաստեղծութիւնը պէտք է որ — գեղարուեստից վարդապետան կարգաւ զանոնք յիշելով — ճարտարապետութենէն փոխ առնու գիծն, արձանագործութենէն՝ ձեւը, պատկերահանութենէն՝ գոյնն, երաժշտութենէն (ու պարէն) եղանակն ու կշռութիւնն, իսկ սրտէն. ... արհնը»¹¹։ Նույն կերպ՝ «Միացո՛ւր քերթուածի մը մէջ Լրգօնթ տը Լիլի գիծը, Պօտրլէօի ձեւն, Հիւկոյի գոյնը, Լամառլիին երաժշտութիւնն ու չափականութիւնը. միացո՛ւր ինչ որ կրնայ բացատրել երանգանքութիւն՝ աշխարհիս ամէնէն հարուստ լեզուն. պիտի արտագրես սքանչելի ոտանաւոր մը, ձեւարուեստական հրաշակերտ, Պալզագի անծանօթ գլուխ-գործոցն, այլ թէ՛ բանաստեղծութիւն մը, ո՛չ»։ Ինչո՞ւ ... Որովհետեւ թվարկվածների մեջ բացակայում է ամենակարևորը՝ «սրտին ... արհնը»։ Ուրեմն, ո՞ր դեպքում քերթվածը կփոխվի Եղիայի երազած «ճշմարիտ» բանաստեղծության։ Ահա՛ այդ հարցի նրա սպառիչ բացատրությունը՝ «Աչքէդ թող կաթիլ մը կաթէ կրակէ, սրտիդ արեան մէկ գնդակն հոն թող մտնէ, գիծ ու գոյն ու թանձրութիւն չունեցող այն բանն որ հազիւ թէ ձայն մ'է՛ թող հառաչանքն — անթոյր անծաւալ բոցն հոգւոյն — վառէ վաւերէ քերթուածդ, եւ կենդանի բան մը ունիս ...»։ Դա այլևս ոչ թէ «ձեւարուեստական հրաշակերտ» է, այլ կենդանի, նույնիսկ «չնչող ու նայող մարմար մը որոյ լանջըը կ'ուռի ու ճակատը կ'արտախորհի, որոյ երակք ո՛չ ներկով՝ այլ արեամբ գունաւորուած են»։ Այդ դեպքում է, ահա, որ, ըստ Եղիայի, «ճշմարիտ բանաստեղծութիւն մ'ունիս հիմա. յոյն աստուածուհի մը, խաչին հպամբ կենդանացած ու քրիստոնէութեան մեղամաղձոտութեամբ գեղաշնորհուած, յատկութիւնն իր շրջագիծին մէջ, տարտամութիւնն իր նայուածքին մէջ, յափրանքն իր շրթանց վրայ, բաղձանքն իր կրծոց վրայ, մահն իր վարչապարին տակ, անմահութիւնն իր ցուցամատին ծայր, իր ցուցամատին՝ մշտածիզ մագնետիկ գմայլմանց»։

Ե. Տեմիրճիպաշյանը, իհարկե, լիովին հաշիվ տալիս էր իրեն, որ «հազիւ ուրեք իրանալի մտատիպար» հանդիսացող նման «ճշմարիտ» բանաստեղծությունը «մերձեցումն, այդ մտատիպարի» յաւէտ կամ նուազ կատարեալ իրացումն ալ» ոչ միայն դյուրին բան է, այլև «գոյզն արժանիք մը է», քանզի դա ինքնիրեն չի ստեղծվում «Բանաստեղծն առ այդ պէտք է ձգտի»։ Ընդ որում՝ այդ ձգտումը «արուեստական» չպետք է լինի, այլ առավելագույնս բնական։ «Ո՛չ աշխատիլ, այլ ամփոփուիլ, — մեկնաբանում է Եղիան։ — Վայել-

¹¹ Տ է մ ի ր ճ ի պ ա շ ե ա ն. 2015, 360:

ման կամ վշտակրություն պահուն ուսումնասիրել յանգագայս. եւ ձեռքն յանգագայս կը ձգի գրչին ու կը շարժի թղթոյն վրայ. բաբախմանցդ հետ կ'ելեւէջէ գրիչդ, եւ արտասուացդ հետ կը գլորին պարբերութիւնք»։ Ամեն բան պիտի կատարվի բնագդաբար, ներքին մղումով, սրտի և հոգու թրթռումով ... Պարգապես «Հոգւոյդ մէջ կամ սրտիդ մէջ բան մը կար, որպէս իրիկնամուտին բան մը կայ երկնքի մէջ. չկաթող ոսկի արտասուքն որ յերկինս կը գոյանայ՝ յորժամ ստուերք յերկրի տարածութիւն իրիկնամուտին. անմարմին անմահ մասնակունք են որոնք ի մարդն կը գոյաբերեն՝ յորժամ յուզուի հոգին, եւ որոնք կը լուծուին թեամբ՝ կոհակաց նման՝ կը կաթին աչքէն ու կը հոսին սրտէն, երբ Պէշիկթաշլեան է մարդ կամ Պետրոս Դուրեան»։

«Բանաստեղծի դաւանանքս ահա յայտնեցի», – ասում է Եղիան՝ միաժամանակ հայտարարելով, որ ամենեւին էլ չի հավակնում բացարձակ ճշմարտության։ Ընդհակառակը, խոստովանում է. «Եթէ տաղերս իմ տառապանացս արձագանգն են, եթէ կը տաղերգեմ ի՞նչ որ ես իս ընդմէջէն կը տեսնեմ, անտարակոյս չեմ յաւակնիր բացարձակ, բարձրագոյն հրաշակերտից հեղինակն ըլլալ»։ Ըստ էութեան, ինչպէս որեւէ անհատի, այնպէս էլ իր ստեղծագործութեան իրական արժեքի և խորքի գնահատութիւնը նա թողնում է խորունկ և բանիմաց ընթերցողի դատին»¹²։

«Անձնական եւ անանձն բանաստեղծութիւն»

Տասնամյակի վերջին՝ «Մասիս»-ի 1899-ի մի շարք համարներում, Հուր Հայրան ստորագրութեամբ հրապարակած իր երկրորդ «Տաղարան»-ին կցած «Ներածութիւն»-ում, Տեմիրճիպաշյանն ավելի ծավալուն և բազմակողմանիորեն է անդրադառնում նշված հիմնահարցերին։ «Աշխատութեան համար իր հրաւերին վրայ՝ մեր Շամտանճեանի «Մասիս»-ին անտիպ բանաստեղծութեանցս Հաւաքածոյն տուած ժամանակս, – գրում է նա, – անդէպ չեմ համարիր երկու խօսք ընել բանաստեղծութեան ու բանաստեղծներու վրայ»¹³։

«Ներածութիւն»-ը բաղկացած է երեք մասից՝ «Ի՞նչ է բանաստեղծութիւնը», «Բանաստեղծութիւնը կը մեռնի»¹⁴ և «Անձնական եւ անանձն բանաստեղծութիւն»։ «Ի՞նչ է բանաստեղծութիւնը» ավանդական հարցին գրեթե մեկ տասնամյակ անց Եղիան պատասխանում է. «Բանաստեղծութիւնը մարդուս խօսքն է, երբ ներոյժ բերկրանք կամ ներոյժ տառապանք կը զգայ»։ Եվ դարձյալ. «Բանաստեղծութիւնն, ինձ համար, մարդկային հոգւոյն երկու գլխաւոր փոփոխութեանց համեմատ երկուքի պէտք է բաժնուի. զուարթ եւ տխուր»։ Ընդ որում՝ այս «երկուքի» հարաբերութիւնը նույնը չէ քրիստոնեութեանից առաջ և հետո։ Ըստ Եղիայի, «Քրիստոնէութենէն առաջ բանաստեղծութիւնը զուարթ ու տխուր է, կամ մեծապէս զուարթ եւ անզգալապէս կամ անգիտակցապէս տխուր. քրիստոնէութենէն ետքը տխուր ու զուարթ, կամ հիմնապէս տխուր ու մակերեւութապէս զուարթ»։ Բայց ամեն ինչ սրանով ևս չի ավարտվում, քանզի՝ «Միջին կամ չէզոք բանաստեղծութիւն մ'ալ կայ, որ անզգացներուն (impassible) բանաստեղծութիւնն է, եւ, զոր ես չեմ կրնար բանաստեղծութիւն համարիլ, եթէ մարմարային անզգայ անշարժ ձեւին տակը, շատ

¹² Տ է մ ի ը ճ ի պ ա շ ե ա ն. 2015, 361–362։

¹³ Հ ա յ ը ա ն. 1899, թիւ 7, 204։

խորը, չը գտնեմ մարդուս հոգւոյն երկու գլխաւոր վիճակներէն մէկը, — պայծառ վիճակն ու մռայլ վիճակը ...»¹⁴: Ինչ վերաբերում է «Բանաստեղծութիւնը կը մեռնի»¹⁵ հարցին, որը կարծես օրախնդիր էր դարձել մանավանդ «տիեզերաց վրայէն քօղը մերկանալով գիտութիւնը», երբ «մտածեր են թէ՛ մերկ եւ իրական բնութեան տեսիլն հմայաթափ պիտի ընէր մարդկութիւնն», ապա, մի թուցիկ, բայց խոր հայացք նետելով պոեզիայի զարգացման ընթացքի վրա՝ նախնի դարերից մինչև արդի ժամանակները, Եղիան հաստատում է. «Այս երկիւղն անհիմն էր, առ երեւոյթս միայն հիմնաւոր»¹⁵: «Ո՛չ, բա՛ն մը չը մեռնիր, եւ ամենէն նուազ՝ բանաստեղծութիւնը, — ի վերջո, եղրակացնում է նա: — ... բանաստեղծութիւնը մարդոց մէջ կայ ու կը զարգանայ. տրամաբանօրէն, եթէ մարդուն — որպէս Լիդռէ կը գուշակէ — աւելի կատարելագործեալ ուղեղով բարձրագոյն էակ մ'ալ յաջորդէ, ա՛ն ալ պիտի ունենայ բանաստեղծութիւն: Եւ ի՞նչպէս պիտի մեռնէր Բանաստեղծութիւնն, որ անմահութիւն կուտայ»¹⁶:

Շարքի երրորդ՝ «Անձնական եւ անանձն բանաստեղծութիւն» հատվածը, ըստ էութեան, արվեստագետի, բանաստեղծի անհատական էութեան քննութիւնն է: «Մարդս երկու կերպով բանաստեղծ կ'ըլլայ», համոզված էր Եղիան՝ «բանաստեղծութիւններ կարդալով», կամ «բանաստեղծութիւն ապրելով»: Այսինքն՝ բանաստեղծների մի մասը «արուեստի գործ կը կատարէ», մյուսը՝ «կեանքի գործ»: Ե. Տեմիրճիպաշյանի բացատրութիւնը շատ հստակ է. «Արուեստի բանաստեղծն ընդհանրապէս իր նիւթն ինքնիրմէն դուրս կ'առնէ, կեանքի բանաստեղծն իր նիւթն ինք իր մէջ կը փնտռէ, իր նիւթն ինքն իսկ է»: Սա նշանակում է, որ մեկի համար բանաստեղծութիւնը՝ անկախ բովանդակութիւնից, սոսկ «ոտանաւոր շարագրութիւն մ'է», մյուսի համար՝ առավելագոյնս բնական, գրեթե «անգիտակից արտադրութիւն», որ ծնունդ է առնում «արտասուքին կամ ժպիտին փթման նման», որի մեջ «հոգին է որ կ'արտայայտուի, երբ պէտքն զգայ արտայայտուելու եւ ոչ երբ կամք ունենայ բանաստեղծն արտադրելու»: Հատկանշական է, որ նման տարբերակում անելով Տեմիրճիպաշյանը, միաժամանակ, դեմ էր այն որևէ մեկին պարտադրելուն: Տողատակի ծանոթագրութեամբ նա հայտարարում է, թե «Յաւէտ անկեղծօրէն խնդակցելի են ա՛յն հրապարակագիրք, որոնք նոր սերնդեան յորդոր կը կարդան լաւատեսութեան ու գուարթութեան: Սակայն անհանդուրժելի է որ՝ հանդիպողն ելնէ պատգամ տալ բանաստեղծներուն եւ օրէնք դնել բանաստեղծութեան»¹⁷: Ըստ էութեան, այդ կերպ նա արտահայտում էր ստեղծագործական ազատութեան մասին իր տեսակետը:

Հրապարակման ավարտին Ե. Տեմիրճիպաշյանը նշում է, որ «Մասիս»-ին տրամադրած բանաստեղծութիւնները գրել է իր կյանքի «ամենէն դժբաղդ» տարիներին, քանզի, ըստ նրա, «Դժբախտութեան մէջ ամենամեծ սփոփանքն են մարդուս համար հաւատքն ու բանաստեղծութիւնն»: «Աստուած բառին մէջ, ի խորոց հոգւոյն արտաբերեալ, ինչ միտիթարութիւն կայ. եւ բանաստեղ-

¹⁴ Հ ա յ ր ա ն. 1899, թիւ 7, 204–205:

¹⁵ Հ ա յ ր ա ն. 1899, թիւ 7, 205:

¹⁶ Հ ա յ ր ա ն. 1899, թիւ 7, 207:

¹⁷ Հ ա յ ր ա ն. 1899, թիւ 8–9, 247:

ծովերն մը, որ հոգիէն կամ սրտէն կը բղխի, քանի՞ն կը թեթեւցնէ կ'ամոքէ մեր վիշտն», – գրում է նա: Բանաստեղծությունը բաժանելով անձնականի և անանձնականի՝ եղիան խոստովանում է, որ գրել է այդ երկու տեսակներով էլ, միայն թե «գուարթ կամ անտարբեր» քերթվածների համար ընդհանուր խորագիր կամ ինչպես ինքն է գրում՝ «ընդհանուր մակագիր մը» դեռ չի որոշել: «Տխուր քերթուածները», որ ավելի հարազատ էին իրեն, ամփոփել է «Հրայրք մութին» խորագրի տակ, քանի որ խոստովանում է, թե «Զիս ամենէն աւելի ներշնչողը մութն եղած է միշտ. երեկոյեան ստուերներն, անդնդոց ու հոգւոյն մութ ալքերը, խաչն – իր ոտքի մութ գանկն եւ իր գլխուն վրայի մութ ամպը, սեւ մազերն ու սեւ աչքերը, ագռաւն ու անգղը, բուն ու փոթորիկը, ինչ որ սեւ կ'երգէ եւ ինչ որ սեւ կը թորէ»: Եվ ապա՝ «Մէ, հրայրքով ա՛յո՛ կը սիրեմ մութն. եւ հոգւոյս ճիչերով կը գծագրեմ զայն թուղթին վրայ»: Միաժամանակ, եղիայի փափազն էր, որ ճիշտ ընկալվելով ու հասկացվելով, իր քերթվածներն իրեն «ըրած բարիքնին իրենց ընթերցողներուն ալ ընէին ...»¹⁸:

Ժամանակի գրական հանրությունը, անգամ իր մտերիմ չըջապատը, սակայն, բազմիցս քննադատել են Տեմիրճիպաշյանին՝ անձնական, այսպես կոչված, «ես»-ի կամ «ենթակայական» բանաստեղծությամբ հավատարիմ մնալու համար՝ նույնիսկ արեւմտահայ մամուլում առիթ տալով ծավալուն բանավեճերի: Այստեղ նշենք միայն, որ «ես»ը խորագրով այդպիսի մի հրապարակման¹⁹ առիթով, նա հանդես է եկել «Զարգացումն «ես»ին», ըստ էության, ինքնավերլուծական հոգվածով, որում հարկ է համարում ներկայացնել ստեղծագործական անհատականության էության վերաբերյալ բազմիցս արտահայտած իր տեսակետը, ըստ որի «... գրող միւր անձին վրայ կրնայ խօսիլ երկու եղանակաւ, ուղղակի կամ անուղղակի»: Այսինքն՝ «Կան հեղինակք՝ որոնք իրենց «ես»ը կամ կեանքը կը դնեն ուղղակի՝ իրենց գործոց մէջ. կան ալ՝ որոնք իրենց կեանքէն կը դնեն իրենց երկասիրութեանց մէջ»: Կարճ ասած՝ «Հայցականի և բացառականի տարբերութիւն»²⁰:

Մինաս Չերազի վկայությամբ՝ «հակառակորդներէն ոմանց» կարծիքով Տեմիրճիպաշյանը նույնիսկ «գուրկ էր քննադատական ոգիէ»²¹: Ըստ եղիայի կենսագիրներից մեկի՝ Հրաչյա Պետրոսյանի, նրա «բազմաթիւ տեսութիւններն ... չունին յաճախ քննադատի լրջութիւնը»²²: Հակոբ Օշականը՝ հավաստելով, որ Տիրան Չրաքյանի յուրաքանչյուր քննադատական ելույթ «վկայութիւն մըն է Չրաքեանի հոգիէն», այդ արժանիքն ու խորքը գլանում էր հատկացնել ոչ միայն Արտաշես Հարությունյանին ու Արշակ Չոպանյանին, այլև եղիա Տեմիրճիպաշյանին²³:

Գրադատության անհրաժեշտությունը

Դեռևս 1880-ականի կեսերին, «Գրադատութեան պակասութիւնն» հոգվածում Տեմիրճիպաշյանը հայտարարում է, թե «մեր ազգին մէջ գրէթէ չը կայ

¹⁸ Հ ա յ ր ա ն. 1899, թիւ 8–9, 249:

¹⁹ Տե՛ս «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1893, թիւ 413:

²⁰ Տ է մ ի Ր ճ ի պ ա շ ե ա ն. 1893, 146–147:

²¹ Չ ե ր ա գ. 1929, 33:

²² Փ է ն է ր ճ ե ա ն, Պ ե տ ր ո ս ե ա ն. 1921, 93:

²³ Օ շ ա կ ա ն. 1980, 136:

գրադատություն», այդ իրողությունը հիմնավորելով նաև այն փաստով, որ «Գրագէտը, որք նիւթական ու բարոյական մեծամեծ զոհողութեամբք երկասիրութիւն մ'երեւան կը հանեն, ապաքէն անտես կ'անցնին ամբողին մէջ»²⁴: Օրինակ բերելով եվրոպական նույնիսկ «ամենալուրջ քաղաքական թերթեր», որոնք «առիթ կը գտնեն, անվրէպ ամեն նոր հրատարակութեանց ու թատերց վրայ գրադատական յատուկ յօդուածներէ զատ, իրենց խմբագրական յօդուածոց մէջ իսկ հռչակել մեծ մատենագիրներուն ծառայութիւններն առ ազգն»՝ Ե. Տեմիրճիպաշյանը ցավով նշում է, որ հայոց մեծ ու փոքր օրաթերթերն անտարբեր են գրի ու գրականության, «գրական շարժման» հանդեպ: Իր արտահայտությամբ «վշտացած» էր բոլոր նրանցից, ովքեր չէին նկատում, թե «Հայոց մէջ ալ կայ գրականութիւն, թէ կան գրագէտք որք ազգին մէջ իրական ու տեւական գործ մը կը կատարեն, մշակելով ազգային լեզուն, զարգացնելով միտքերն, ազնուացնելով սիրտերն, փափկացնելով ճաշակներն»²⁵: Մինչդեռ, ըստ նրա, հայ մամուլը, մասնավորապէս, «Ազգային տեսութեանց յօդուածագիրք, ... յիշելու էին մերթ ընդ մերթ այն Հայկազունքն՝ հին եւ նոր՝ ոյց պարտի Հայութիւնն իր սրտի ու մտաց մշակութիւնն: Օրաթերթք պարտէին՝ գէթ նուազ արհամարել գրականութիւնն»: Վերջապէս ընդգծելու համար գրողի՝ բանաստեղծի, դերի ու նշանակության կարեւորությունն ազգային թե մարդկության կյանքում, Եղիան դիմում է հայտնի ավանդույթներից մեկի օգնությամբ: «Սպարտա՝ տազնապի մը ժամանակ՝ զօրավար մը խնդրեց Աթէնքէն, — գրում է նա: — Աթինացիք՝ որք կը նախանձէին Սպարտացւոց զօրավարի տեղ բանաստեղծ մը յղեցին հեզնօրէն: Սակայն բանաստեղծն ըրաւ՝ ինչ որ զօրավարն անկարօղ պիտ'ըլլար ընել գուցէ»²⁶:

Որոշակիորեն տարբերակելով «վարչական մարդն ու գրական մարդն, որք իրենց յատուկ տեղերն ունին»՝ Ե. Տեմիրճիպաշյանը, սակայն, մինչև անգամ եկեղեցական առաջնորդների ընտրության հարցում նախապատվությունը տալիս էր նրան, ով ունակ էր միացնելու այդ «կրկին կարողութիւններն»: Նա խոստովանում է, որ ամենեւին չնանմացնելով Կ. Պոլսո հայոց Պատրիարք ընտրված Տ. Հարություն Վեհապետյանի «վարչական կարողությունն ու գործնական ոգին»՝ ավելի գոհ է ուրախ կլինել, եթե վերջինս «Վարժապետեանի կամ Նար-Պէյի պերճախօսութեամբն եւ կամ Խրիմեանի բանաստեղծական հանճարովն օժտուած ըլլար»²⁷:

Ո՞վ է ճշմարիտ գրագետը, բանաստեղծը

Այնուամենայնիւ, ո՞վ է ճշմարիտ գրագետը, բանաստեղծը, որո՞նք են նրա էությունը կազմող տարրերն ու հատկանիշները: Այս հարցերի պատասխանն առավել հանգամանորեն Ե. Տեմիրճիպաշյանը փորձում է տալ Մեզպուրյան վարժարանի մրցանակաբաշխության հանդեսում արտասանած ելույթում: Իր մտերմի՝ մեծանուն մանկավարժ Ռեթեոս Պերպերյանի դատեր՝ «միամեայ միակ Գեղանոյշի» մահն այդ օրերին Եղիայի համար ավելի քան բավարար առիթ էր արտահայտելու իր մտքերն ու տեսակետները կյանքի ու մահվան, առաջա-

²⁴ ԳԻՇ. 1884, տետր երկոտասաներորդ, 225–226:

²⁵ ԳԻՇ. 1884, տետր երկոտասաներորդ, 227:

²⁶ ԳԻՇ. 1884, տետր երկոտասաներորդ, 228–229:

²⁷ ԳԻՇ. 1886, տետր երկրորդ, 19–20:

դիմության, կրթության ու մշակութի, գրողի էություն և հասարակության մեջ ունեցած դերի շուրջ: Թվարկելով կյանքի ընթացքում մարդուն հանդիպող մեծ փորձությունները և կյանքը համեմատելով անվերջանալի պայքարի կամ «մարտի» հետ՝ նա հաստատում է, որ այդ ամենը, ի վերջո, «երկու բառերու մէջ կը բովանդակին — Կեանք եւ Յառաջադիմութիւն»²⁸: Սակայն, ըստ նրա, ամեն բան այնքան էլ միանշանակ չէ, առաջադիմութիւնն ուղղագիծ չարժուած չէ, այլ շատ անգամ հակադիր կողմերի պայքար ու հետեանք: «Այո՛, կեանքն ստուերներով ու շողերով է լի, — գրում է Ե. Տեմիրճիպաշյանը, — այո՛, յառաջադիմութիւնն այս պայմաններով կը կատարուի: Սերունդի մը ձեռք ստուերաց ծոցէն բխւոյ տաժանօք խլեալ շողերն՝ յաջորդ սերնդեան իբրեւ ջահ կը ծառայէն. եւ սերունդի մը աչքէն կաթած արտասուքներն՝ յաջորդ սերնդեան սրտին մէջ զգացման գանձեր ի գոյ կածեն»: Բայց դա պայմանն է նաեւ բանաստեղծի՝ մարդկային ու ստեղծագործական առաջադիմության: Քանզի բանաստեղծութիւնը ևս «այսպէս՝ սկիզբն կ'առնու եւ կը զարգանայ տակաւ, ծնանելով արտասուքէն»: Ինչպէս որ աշխատանքով է զորանում մարդը՝ քրտինքը փոխարկելով ուժի և հարստության, այդպէս նաեւ բանաստեղծը. «... որքան տառապի, այնքան կ'ազնուանայ. որքան խոր իջնէ կենաց ու տիեզերաց անդունդներն, այնքան բարձր կը սաւառնի մտաց վերնագաւառներն»: Վերջապէս, առավել մատչելի — հասկանալի ձևակերպմամբ. «... որքան լայ, այնքան կը մեծանայ ...»²⁹: Ահա, թե ինչու համոզված էր Ե. Տեմիրճիպաշյանը, այդպիսի ստեղծագործ անհատի, այսինքն՝ «հանրային մարդուն, դաստիարակին, գրագիտին, բանաստեղծին, երեսփոխանին դժբախտութիւնն հանուրց համար ալ է դժբախտութիւն»³⁰: Մեկ այլ «Հիւանդութիւնս» վերնագրով գրության մեջ Եղիան խոստովանում է, թե հենց գրական ասպարեզի մէջ «կը գտնեմ միանգամայն տառապանքս եւ սփոփանքս»³¹: Պատահական չէր նաեւ, որ «Արեւելք»-ում տպագրած իր մի հոդվածում (նվիրված՝ Հովհաննես Հովհաննիսյանի Մոսկվայում լույս տեսած «Բանաստեղծութիւններ» ժողովածուին) Լևոն Բաշալյանը՝ իր տեսակետները հաստատելու համար, հղում էր անում նաեւ Ե. Տեմիրճիպաշյանին: Մեջբերելով Հովհ. Հովհաննիսյանի տողերը՝ «Ախ տուէ՛ք ինձ քաղցր մի քուն, // Կեանքից հեռու սրբանամ // Այն աշխարհը, ուր խնդրութիւն, // Ուր սէրն է միշտ անթառամ»³², — գրում է, թե «Ճիշդ տեղն է յիշատակել մեր մէջ դարուս հիւանդութեան անբաղդատելի երգչին Տեմիրճիպաշեանի սա խօսքերը. «Եւ տառապանքն արդի կենաց պայմանն է՝... »³³: Պետք է ասել, որ պատահական չէր նաեւ Լ. Բաշալյանի հիշյալ հոդվածի արտաստությունը Ե. Տեմիրճիպաշյանի խմբագրած «Երկրագունտ»-ում: Եվ ահա թե ինչու: Այսպէս կոչված, «դարի հիւանդության» հիմնարար հատկանիշներից մեկը համարվող Տառապանքի մոտիվը ժամանակի գրական հանրության կողմից ամենաշատ քննվող խնդիրներից էր: Հիշյալ հոդվածում Լ. Բաշալյանը նույնպէս անդրադարձել էր այդ մոտիվին, ընդ

²⁸ ԳԻՇ. 1885, տետր ութերորդ, 153:

²⁹ ԳԻՇ. 1885, տետր ութերորդ, 153–154:

³⁰ ԳԻՇ. 1885, տետր ութերորդ, 151:

³¹ ԳԻՇ. 1885, տետր տասներորդ եւ մետասաներորդ, 177:

³² Բ ա շ ա լ ե ա ն. 1887, 477:

³³ Բ ա շ ա լ ե ա ն. 1887, 480:

որում՝ բավական լայն ու խորքային ընդգրկմամբ: Հովհ. Հովհաննիսյանի «փոքրիկ հատորի» առիթով նա խոսում է ընդհանրապես ժամանակի ուսաստանայ բանաստեղծության մեջ կատարվող տեղաշարժերի մասին. «... այս տեսակ բանաստեղծության գիրք մը երբեք չէր եկած Ռուսահայոցմէ», – ոգևորված գրում է նա: Եվ ավելին. «Առանց ոչ զոք վիրաւորել ուզելու, բացառապատալէս կրնանք ըսել թէ Ռուսահայոց մէջ բանաստեղծութիւնն երբեք չէր զգացուած այնպէս ինչպէս կ'զգացուի այլուր»: Իսկ ո՞րն էր այն նորը, որ այդպէս ոգևորել էր Լ. Բաշալյանին. «Ի բաց առէք հայրենասիրական հոգեշունչ երգերը, զորս ուսաստանայ բանաստեղծք գիտեն յօրինել այնքան խանդով ու ճարտարութեամբ, մնացեալ քերթուածք բոլորովին զուրկ են այն ոգիէն որ պէտք է թրթուայ բոլոր տաղերու մէջ: Բանաստեղծութեան մէջ պէտք է գտնես բարձրագոյն բան մը որ յուզէ, վերացնէ, հորիզոնէն անդին փոխադրէ գքեզ, թուիչ տայ երազներուդ եւ ցունց տայ յոյզերուդ, մոռցնել տայ քեզ իրական կենաց բոլոր տափակութիւններն, ու մտածել տայ քեզ, ու տխրեցնէ քեզ, ու լացնէ»: Եվ Լ. Բաշալյանը համոզված էր, որ «Յ. Յովհաննիսեան այս հիմնական յեղափոխութիւնը կը մտցնէ Ռուսահայոց բանաստեղծութեան մէջ», քանզի «Պ. Յովհաննիսեան դարուս հիւանդութեան զոհերէն մին է», և «Իւր քերթուածք իւր սրտին անդամազննութիւնն են»: Իսկ ի՞նչ է, ըստ էութեան, այդ «դարի հիւանդութիւնը»... «Սոսկալի բան մ'է այն, – ասում է Լ. Բաշալյանը, – ... Հնութեան վիշապին հանգունատիպ, հարիւր անուն ունի. տխրութիւն, մեղամաղձութիւն, միստիկութիւն, սկեպտիկութիւն, յուսահատութիւն, յոռետեսութիւն, սքիւն, ջլախտութիւն, ու դեռ չեմ գիտեր ինչ: Այլ ասոնց ամենուն մէջ հասարակաց բան մը կայ, տառապանքն: Այո՛, դարուս հիւանդութիւնն է տառապանքն, այսինքն անբացատրելի վիշտ մը անբացատրելի բանի մը համար: Իւր զոհերն այսօր չեն համրուիր. լէգէոն կը կազմեն: Իւր ազդեցութիւնը գերիշխան է մանաւանդ գրականութեան մէջ...»³⁴:

Ընթացիկ գրականութեան գնահատութեան չափանիշները

Ուրեմն, որո՞նք էին այն չափանիշները, որոնցով պետք է գնահատվեին XIX դարի երկրորդ կեսին ստեղծված գրական արժեքները: Դեռևս 80-ականներին կեսերին բանասեր, մանկավարժ, պատմաբան Գվիդոն Լուսինյանի նամակի (Փարիզ, 23 Հոկտ., 1884) առիթով, Ե. Տեմիրձիպաշյանը նկատում էր, թե իր «Անգեղն երգ» քերթվածի տպագրությամբ «Հայ քերթութիւնն որոշապէս կը թեւակոխէ նոր շրջանի մը – Իմաստասիրական շրջանին – մէջ»: Որ սա պատահական մի արտահայտութիւն չէր, այլ սկզբունքային, ծրագրային մոտեցում և համոզմունք, երևում է հաջորդ իսկ տողերից. «Ըստեմ է թէ Բանաստեղծութիւնն Իմաստասիրութեան հետ անհաշտ է: Գուցէ տաղերովս ալ յաջողիմ հակառակն ապացուցանել, եթէ չը մատնեն զիս անձնական դժբախտութիւնք – իմ վեհագոյն մուսայք»³⁵: Մեկ այլ առիթով մեծքերելով «Փռնասաի Համալսարանին ականաւոր ուսուցչաց» մեկի կարծիքը, թե «Իմաստասիրական ամեն նոր մտածութիւն իր հետեւութիւններն ունի Մանկավարժութեան համար. եւ հաւատալ Մանկավարժութեան, Իմաստասիրու-

³⁴ Բ ա շ ա լ ե ա ն. 1887, 11–12, 474–475:

³⁵ Գ Ի Շ. 1884, տետր մետասաներորդ, 203:

թեան է հաւատալ», հարց է տալիս. «Իսկ Գրականութիւնն օտա՞ր է միթէ Մանկավարժութեան եւ Իմաստասիրութեան»: Քանզի, ըստ նրա, «Մտաց գիտութիւնն է Իմաստասիրութիւնն. իսկ Գրականութիւնն է գիտութիւնն այն ձեւոց, զորս զգենուլ պարտի միտքն իր արտայայտութեանց մէջ. Մանկավարժութիւնն ալ այն գիտութիւնն է, որ կ'ուսուցանէ թէ ինչպէս պարտինք զարգացնել մանկան խորհելու եւ խօսելու կարողութիւններն»: Ահա թե ինչու, եղիան նաև մտահոգւում էր, որ «Հայ մամուլն ընդհանրապէս ըմբռնած չէ տակաւին ոչ Իմաստասիրութեան, ոչ Գրականութեան, ոչ Մանկավարժութեան կարեւորութիւնն»³⁶: Պատահական չէր նաև, որ նա «Երկրագունտ»-ում թարգմանաբար հրատարակում է Փրանսիացի տեսաբաններից մեկի՝ Ալֆրեդ Փուլյեի, «Ուրվիւ տէ տէօ մօնտ» պարբերականում հրապարակած մի հոդվածը, որում հեղինակը ևս հաստատում էր. «Իմաստասիրութիւնն երբէք վնասած չէ՝ ոչ միայն գիտութեանց, այլև գրականութեան ...»: Ապա իր տեսակետը հիմնավորելով Փրանսիական մի շարք դասական գրողների օրինակներով եզրակացնում. «Մեր արդի լաւագոյն մատենագիրք ալ իմաստասէրներ են. մեր ժամանակակից քերթողաց ամենէն գեղեցիկ էջերն իմաստասիրական ներշնչումներ են, ... մեր լաւագոյն թատերգութիւնք ու մեր լաւագոյն վիպասանութիւնք՝ բարոյական իմաստասիրութեան ու հոգեբանութեան թատերգք ու վէպք են»³⁷:

Այս ամենից հետո օրինաչափ էր, որ Տեմիրճիպաշյանը նախապատվություն պիտի տար, ընդհանուր ձևակերպմամբ՝ «պիտանի» գրականությանը: «Երկրագունտ» հանդեսի «Ազգ»-երից մեկում, օրինակ, մտահոգություն էր հնչեցվում այն կապակցությամբ, որ «Զբօսանքի (իմա՝ ժամանցի— Պ. Դ.) գրեանք համեմատաբար շատ կը հրատարակուին մեր մէջ, իսկ պիտանի գրեանք քիչ»³⁸: Ահա, թե ինչու հորդորում էր բոլոր գրի ու խոսքի մարդկանց «հնար եղածին չափ խղճամտօրէն» աշխատել՝ «յիշելով թէ հազարաւոր ազգայնոց ուղղեալ դասախօսութիւնք են իրենց հրատարակութիւնք»: Ապա թե՛ «Խղճամիտ աշխատութիւնք յամր կը կատարուին, եւ մատենագրութեանց համար անշուշտ ըսած չէ Սենեկա թէ՛ Արագ տուօղն երկիցս կու տայ. «Bis dat qui cito dat»³⁹: Որովհետեւ, ինչպէս Տեմիրճիպաշյանի հրապարակումներից մեկի՝ Խաչիկ-Հայկ երկխոսության մեջ նկատում է, ըստ էութեան, եղիայի տեսակետներն արտահայտող Հայկը, «Ուսմունքը կա՛մ վնասակար է կա՛մ օգտակար. գիրքը կա՛մ յառաջադիմութեան գործիք մ'է կա՛մ յետադիմութեան. վարժապետը կա՛մ քաղաքակրթութեան մեծ գործաւորն է կա՛մ բարբարոսութեան ...»⁴⁰:

Վերջապէս, ազգային թե համամարդկային գրականություն՝ ժամանակի առաջադրած խնդրի վերաբերյալ Ե. Տեմիրճիպաշյանն ուներ իր հստակ տեսակետը, ըստ որի, ի հակադրություն այն հեղինակների (Մ. Աղաբեգյանց, Իզմիր-յանց և այլք), որոնք գտնում էին, թե «... ազգի մը յառաջադիմութեան, ազ-

³⁶ ԳԻՇ. 1884, տետր երկոտասաներորդ, 229–230:

³⁷ Յ ու յ յ է. 1887, 483–484:

³⁸ «Երկրագունտ», 1885, թիւ 7, 337:

³⁹ Ե. 1886, թիւ 1, 36:

⁴⁰ Ե. 1887, թիւ 9–10, 382:

գայնություններն մը բարոյական պահպանման համար հարկ է որ ազգի մը բոլոր մատենագիրք ալ «ազգային գրականություն ընեն», նա կողմնակից էր «յայտնապէս գրականութեան ազատ զարգացման ազգային թէ՛ մարդկային համայնադէմ ուղղութեամբ»: Եվ այդ տեսակետը հիմնավորում էր նրանով, որ «Ազգի մը սեփական հանգամանաց բացարձակ պահպանման գաղափարն անհաշտ է բարեշրջական վարդապետութեան հետ», ուստի և «անօգուտ է կամիլ կամ բաղձալ թէ Ռուս կամ Հայ գրականությունը զուտ ազգային ըլլայ, միմիայն ազգային շրջանակին մէջ թաւալի»: Այլ բան է, Եղիայի համոզմամբ, որ «զուտ ազգային հեղինակներն աւելի եռանդեամբ պիտ'աշխատին եւ իրենց թիւն ալ պիտ'աւելնայ, եթէ նիւթական ու բարոյական խրախուսանաց արժանանան»⁴¹: Ընդ որում, նա այս տեսակետը փորձում էր ամրապնդել նաև մի քանի գործնական դիտարկումներով ու առաջարկներով: Ե. Տեմիրճիպաշյանը կարծում էր, որ արդյունավետ կլինէր, Հ. Իգմիրյանցի կտակի համաձայն սահմանված Սահակ-Մեսրոպյան մրցանակի «մնայուն Թանձնաժողովոյն նման», ստեղծվեր նաև մի այլ պաշտոնական մարմին՝ մրցանակի ներկայացված «աշխատութեանց յատուկ քննութեանն համար»: Առաջարկում էր գնահատել ո՛չ միայն բովանդակությունը, այլև՝ ձևը, քանզի «գրականություն ըսելով միթէ նիւթին (fonds) հետ ձևն (forme) ալ չե՞նք իմանար»: Քաջալերում էր Մանուէլ Միրախորյանի «Նկարագրական ուղեւորութիւն» գործի կարեւորումը, որովհետեւ դրանով «Իգմիրեանց կտակին մրցանակը կը յատկացուի Հայքնակ գաւառաց նկարագրութեան, որպէս զի Հայ գրագէտք հրապուրուին անձամբ տեսնել Հայրենի գաւառներն և խղճամտօրէն գայնս ուսումնասիրել յօգուտ ազգին ...»: Վերջապես, ահագանգում էր, թե պետք են նոր բարերարներ, որ մրցանակներով խրախուսեն բուն «ազգային գրական» գործերը ...⁴²

Դասականների ու ժամանակակիցների վաստակի քննադատական գնահատությունը

Հատկանշական է այն մեծագույն սերն ու պատկառանքը, որ ուներ Տեմիրճիպաշյանը գրական նախորդ մեծերի անձի և ստեղծագործության նկատմամբ: Բնորոշ է պարբերական մամուլի հոգսերին ու խնդիրներին նվիրված նրա ծավալուն հրապարակումներից մեկը, որում՝ հին ու նոր բանաստեղծների բարձր գնահատումը, նրանց մատուցվող մեծարանքը մերժողների անհիմն ու անհարկի ելույթներից մղված, ստիպված էր բացականչել. «Եւ միթէ յանցա՞նք է գովել՝ գովելին. եւ միթէ բանաստեղծք այնքան հասարակ էակներ են. Հոմերոս բանաստեղծ էր. Ալիշան բանաստեղծ է. Խրիմեան ու Նար-Պէյ բանաստեղծ են. Օտեան ու Պէշիկթաշեան բանաստեղծ էին. եւ ունինք այսօր Պէշիկթաշեաններ, ոյք կ'երգեն Երկրագունտի մէջ»⁴³:

Ե. Տեմիրճիպաշյանն առանձին սեր և նույնիսկ ներքին պատկառանք ուներ, մասնավորապես՝ Հայր Դևոնդ Ալիշանի նկատմամբ: 1880 թվականին Մշակ կեղծանունով հրատարակած ազգային և օտար մատենագիրների գործերից քաղված «Հատընտիր» ժողովածուում նա գրում էր. «Ազգային ամենա-

⁴¹ Ե. 1887, թիւ 9-10, 355-356:

⁴² Ե. 1887, թիւ 9-10, 357-358:

⁴³ Ե. 1888, թիւ 6, 280-281:

բարձր հեղինակաց մին է Հ. Ղևոնդ Ալիշան, անդամ Վեներաբլայ Մխիթարեան միաբանութեան: Իբրեւ բանաստեղծ մատենագիր՝ ապաքէն կը գերազանցէ Հ. Արսէն Բագրատունին. իսկ իբր հայրենասէր մատենագիր՝ ախոյեան չ'ունի բոլոր միաբանութեան մէջ: Կը գուշակեմ թէ կրնակն Հոռմայ եւ երեսն Արեւելք, Հայաստան դարձուցած կը նստի Վանքին մէջ լուսատենչ եւ հայրենատենչ Ալիշան ...»⁴⁴:

Ե. Տեմիրճիպաշյանը, իհարկե, որոշ առարկություններ ուներ ինչպես Ղ. Ալիշանի, այնպես էլ Մխիթարյանների ինչ-ինչ տեսակետների վերաբերյալ: Եվ դրանք արտահայտում էր հրապարակայնորեն: Այդուհանդերձ, նա իրեն տեսնում էր նրանց շարքում, որոնք միշտ էլ ընդունել ու ճանաչել են Մխիթարյանների գործի «կարեւորութիւնն ու վեհութիւնն», իրեն համարում էր «Մխիթարեանց բարեկամը», նույնիսկ խոստովանելով՝ գիտի՝ «ի՛նչ կ'արժեն Մխիթարեանք» և սիրում է «զՄխիթարեանս»⁴⁵:

Բարձր գնահատելով Մխիթարյանների ավանդը հայ և համաշխարհային գրականութեան դասական ու ժամանակակից մնայուն արժեքները ժողովրդի մեջ տարածելու գործում՝ Ե. Տեմիրճիպաշյանը մեծ ոգևորութեամբ ընդունում և հանրութեանն է հանձնարարում Միաբանութեան հրատարակած «Ծաղկաքաղ հատուածք» ժողովածուները: Մասնավորապես, երկրորդ հատորի հրատարակման առիթով, ինչպես նկատում է Հ. Սիմեոն Երեմյանը, նա նույնիսկ «պարտք է դնում» հայրենասեր ընթերցողների վրա՝ անպայման «առնուլ գայն և ընթեռնուլ»: «Պիտանի գեղանի, հիանալի մատեան մ'է Ծաղկաքաղն, — գրում է Ե. Տեմիրճիպաշյանը, — զոր կ'ընթեռնում առաւօտուն, զոր կ'ընթեռնում ամէն իրիկուն — և դեռ չեմ յագենար, ... բոլոր զգայուն, վեհագոյն հոգւոց մեղրն այդ մատեանին մէջ ամփոփուած է: Պաշտելի մատեան, անթառամ ծաղիկ. գանձ իմ, լոյս իմ, զբօսանք իմ, սփոփանք իմ — սրտիս վրայ կը պահեմ ես յաւէտ Ծաղկաքաղն»: Ավելորդ է ասել, որ այդ ժողովածուում հավաքված էին բոլոր ժամանակների ամենատարբեր ուղղութեան, ժանրի ու ճաշակի հետևող համաշխարհային գրականութեան լավագույն դեմքերն ու նրանց գործերը՝ «Հոմերոսէն մինչև Կէօթէ Ողիմպիականն, Վիրգիլիոսէն մինչև Վիքտոր Իւկօ քնարերգակն, Տանդէէն մինչև Հայնէ տարօրինակն, ու Դասսօ որ կ'երգէ Երուսաղեմ ազատեալն, ու Միլտօն որ կ'երգէ Դրախտ կորուսեալն. ու աղքատ Ժիլպէոն ու հիւանդ Միլվուան, ու յուսահատ Լորտ Պայրընն, բոլոր քնարք, բոլոր նուագք — բոլոր անմահք — ժամադիր եղած են Ծաղկաքաղ հատուածքի մէջ ...»⁴⁶:

Ե. Տեմիրճիպաշյանը տարբեր առիթներով անդրադարձել է նաև Լամարտինի, Բալզակի, Հյուգոյի, Գյոթեի, գրական այլ մեծությունների անհատականության և ստեղծագործության բնորոշմանը: Ըստ այդմ՝ Լամարտինը նրա համար «դարուս և ամեն դարուց ամենամեծ քնարերգակ» «անմահ» բանաստեղծն է⁴⁷: Վ. Հյուգոյի մահվան կապակցությամբ Եղիան բանաստեղծություն է ձոնել նրան՝ գրական հանրությանը ծանոթացնելու նպատակով, թարգմանել

⁴⁴ Մ շ ա կ. 1880, 19:

⁴⁵ Ե. 1887, թիւ 11-12, 509-510:

⁴⁶ Ս ի մ է ր. 1913, 153-154:

⁴⁷ Ե. 1887, թիւ 11-12, 450:

է «Գրոմուէլի նախաբանն»՝ ձոնելով «Թշվառներ»-ի թարգմանիչ, «բազմադիւն» գրագետին՝ Գրիգոր Զիլինկիրյանին։ «Կատուի մը յիշագիրք»-ում, ոճական տարբեր հնարանքներով բացահայտել է մահկանացուն կնքած «այն ծերունի բանաստեղծի» մեծութունը, ում համար բժիշկները վկայում էին, թե «քառասուն տարու մարդու կազմ ունի»։ Հյուզոյի մահով, սակայն, «մեծ պատուհասէ մ'ալ ազատեցաւ մարդկութիւնն»։ Քանզի «ընդհանուր մարդկային ազգին պատուհասն էր, ընկերութեան բոլոր դասերուն ալ պատուհասն էր այդ «վսեմ մանուկն», որպէս երբեմն կոչուեցաւ իւր նախակարապետէն այն վսեմապառ Շաքոպեանէն»։ Վ. Հյուզոյի կեղծը, սուտը, անարդարը ձաղկող գրական և հրապարակային սուր ելույթներից ստսկում էին իշխաններն ու ազնվականները, քահանաներն ու գրագետները («անտարակոյս դասական գրագէտք»), քանզի «ոսկեղինիկ բանիւք պիտի յանդիմանէր բարձր կոչուած դասն», «պիտի ցուցնէր թէ ինք հաւատացեալ մ'է բառին բարձրագոյն նշանակութեամբ, եւ թէ եպիսկոպոսն ինք է նանրահաւատ կամ անհաւատ», «զի իրենց յաւիտ կամ նուազ ճաշակաւոր հասարակաբանութեանց վրայ հանճարաւոր ու շնչաւոր ու լուսաւոր հեղինակութիւններ պիտի նետէր Հիւկո՝ Վիպականութեան Գոթական ու Քորեփական բարձունքներէն»։ Սոսկում էր մինչև անգամ ժողովուրդը. «... զի Թշուառներու հեղինակն՝ ընկերային մարմնոյն վէրքերն երեւան պիտի հանէր իր ահագին ջահովն, եւ անէծք եւ հայհոյանք եւ սպառնալիք պիտի խլէր հանէր ժողովրդեան հոգւոյն խորերէն, խռովելով միանգամայն ազգաց եւ ազգապետաց անդորրութիւնն»⁴⁸։ Սակայն, ի վերջո, «ի՞նչ է Հիւկոյի յաջողութեան գաղտնիքն» ... Պարզվում է՝ այդ հաջողութեան «երկու գլխաւոր տարրերն եղան ժողովրդեան տգիտութիւնն եւ Նաբոլէոն Երրորդի ճարտարարուեստ բռնակալութիւնն»⁴⁹։ Ապա Կատուն սկսում է քննադատել Վ. Հյուզոյին՝ նրան ավելի ցածր դասելով Բալզակից, Մյուսէից, Գյոթեից և այլ մեծերից՝ մեղադրելով միջակութեան, հակասականութեան և այլ «մեղքերի» մեջ։ Սակայն մի քանի էջ կազմող այդ «քննադատականից» հետո, հանկարծ բացահայտվում է, որ դա մի գրական հնարք է՝ «տկար արձագանգ մը միայն ... ֆոնասական նոր գրական դպրոցին հզօրագոյն ձայներուն»։ Եվ Կատուն «բացում է» իր խաղաքարտերը՝ անկեղծ մեղայականով. «Արդ, մեղայ կը գոչեմ. մեղայ ձեզ, ընթերցողք իմ։ Ես չէի՝ աղերսում է նա։ — ... Յետո կը կոչեմ։ Ես բոլորովին տիրոջս (իմա՝ Ե. Տեմիրճիպաշյանի — Պ. Դ.) հետ համակարծիք եմ. ծայրէ ծայր ճշմարիտ է ինչ որ իր ոտանաւորին մէջ գրեց Վիպառ իւկոյի վրայ»⁵⁰։ Իսկ Ե. Տեմիրճիպաշյանի այդ երկարաշունչ քերթվածում Հյուզոն ներկայանում էր միանգամայն այլ կերպարով.

... Ո՛հ, իւր մատենանքն. նոքա կազմեն նոր Սուրբ Գիրք.
Ինքն առանձին, այո՛, գրեց նա Սուրբ Գիրք.
Յանհուն իւր գործ, եւ այլազան, ճոխ, խոր, բարձր,
Պատկերացուց զդարս, ըզլէպս, զլէմս, զերկնից քաղցր
Զամբաւ նայուածս, ե՛ւս ըզխորոցն արհաւիրս.

⁴⁸ ԳԻՇ. 1885, տետր վեցերորդ, 107–108:

⁴⁹ ԳԻՇ. 1885, տետր վեցերորդ, 111–112:

⁵⁰ ԳԻՇ. 1885, տետր վեցերորդ, 114:

Դատեց խըստիւ մեծաց ըզգործս, եւ ըզգիրս
Նա վերլուծեց իմաստնոց, Հարց, քերթօղաց ...

Ահա, թե ինչու Եղիան հորդորում էր նաև հայությանը՝ աղոթելու, ծնրա-
դրելու՝ «վասն այն անմահ հանգուցելոյն», քանզի՝

Մեր բարերարն էր, եւ համայն մարդկութեան
Եցոյց Հիւկօ բարւոյն օրհնեալ պողոտան...⁵¹

Բայց այս ամենը մի՞թե չէր կարելի հասցեագրել նաև հենց իրեն՝ Տեմիրճի-
պաշյանին։ Տպավորությունն այնպիսին է, որ Հյուզդյի առիթով Եղիան պա-
տասխանում էր նաև իր ընդդիմախոսներին, քանզի, իրոք, մի՞թե նաև իրեն
չէին ուղղված ժամանակի «վայ քննադատներից» շատերի այն մեղադրանք-
ները, թե «Վիզդօս Իւկօն՝ եթէ լաւ քննենք՝ սովորականէն դուրս բան մ'ըրած
չէ՝ բաց յանձնագրութենէ», որի գրվածքներում կարելի է տեսնել «գաղափա-
րի տեղ պատկեր, եւ պատկերի տեղ բառ. գոյականն ածական եղած, ածականն
ալ գոյական», «խօսք առանց բայի», «պարբերութիւնք անվերլուծելի, թէեւ
փողփողմամբ լի»։ Ապա նաև՝ «իմաստասիրի յաւակնութիւն, ու պառաւ կն-
կան խորհրդածութիւն. ամեն քայլափոխի հակասութիւն, ամեն գրուածի մէջ
ճաշակի պակասութիւն», «հաւատք քնարին ծայրն, երկբայութիւն հոգւոյն
խորն», «գեղեցկագիտական քարոզութիւն ու տգեղութեան ջատագովու-
թիւն...»⁵²։ Եվ եթե դա ճիշտ է, ուրեմն Հյուզդյի անձին և ստեղծագործութ-
յանը տրված հետագա գնահատականները հավասարապես վերաբերելի են
նաև Տեմիրճիպաշյանին։ Այսինքն, թե իր ժամանակի այլ տաղանդավոր գրող-
ների (Լկոնտ դը Լիլ, Բանվիլ, Բուրժե և այլն) համեմատությամբ, «բանաս-
տեղծն Հիւկօն է. Հիւկօ շունչ ունի, ներշնչում ունի։ Հանգ ունի Լը Գօնդ տը
Լիլ. եւ անտարակոյս արուեստական անսպառ հանք ունի։ Սակայն Վիզդօս
Իւկօյի հանքն իւր հոգւոյն մէջ է, կամ ընթերցո՛ղ, քու հոգւոյդ մէջ. թերեւս
ոչինչ զգացած է քերթողն. այլ դու կը զգաս, կու լաս, կը վերապանաս տես-
լականի բնագաւառներն, նոր մարդ կ'ըլլաս դու, կը սիրես բանաստեղծն եւ կը
սիրես երկիրն եւ երկինքն։ ... Հիւկօն է որ ըզքեզ կը բժշկէ, կը կենդանացնէ, կը
վսեմացնէ. Հիւկօն է որ ըզքեզ ի քնար փոխարկելու կարօղ է. Հիւկօն է հան-
րութեան բանաստեղծն, Հիւկօն՝ մարդկութեան բանաստեղծն, Հիւկօն՝ տիեզե-
րական բանաստեղծն. ամէն»⁵³։

Ինչ վերաբերում է ազգային գրականությանը, ապա ավագ սերնդի «գրա-
կան երրեակ ամենամեծ» դեմքերի (Ալիշան, Այսրոնյան, Մամուրյան) կողքին,
Եղիա Տեմիրճիպաշյանի համար իրենց առանձնահատուկ տեղն ունեին նաև
Մկրտիչ Պեչիկթաշյանն ու Հակոբ Պարոնյանը։ Կ. Պոլսում 1877 թ. հիմնված
Ասիական ընկերության հանդեսներից մեկում արտասանած իր ճառում նա
խոստովանում է, թե «Երբ գրասեղանիս առջեւ կը նստիմ նկարագրելու համար
հանդէս մը՝ որպիսի էր Ապրիլ երեքին ի Բերա Յունական Բանասրահին մէջ

⁵¹ ԳԻՇ. 1885, տետր վեցերորդ, 99–100։

⁵² ԳԻՇ. 1885, տետր վեցերորդ, 109–110։

⁵³ ԳԻՇ. 1885, տետր վեցերորդ, 114–115։

տեղի ունեցած հանդէսն, ո՛հ, կը փնտռեմ շուրջս Պէշիկթաշեանը ...: Կը փնտռեմ Մկրտիչ Պէշիկթաշեանի Մատենադրութիւնքն, որպէս զի ներշնչուիմ յայնցանէ, որպէս զի յօդուածոյս բնաբան դնեմ իւր մէկ տաղը կամ իւր մէկ բանն»: Եվ դա հիմնավորում էր նրանով, որ «Պէշիկթաշեան ա՛յն բանաստեղծն է, որոյ քնարին ձայնիւ կը միանային այլեայլ հատուածք Հայոց ազգութեան»: Ահա այդ օրն էլ, հիշյալ հանդեսի մեջ փնտրել է «աւետարանական սկզբանց կամ աւետարանական զգացմանց բանաստեղծն՝ որ կը ծաւալէր իւր բանից լոյսն իմացականութեան տօներու պայծառ մթնոլորտին մէջ՝ պայծառագոյն ևս գործելով զայն»: Եվ ահա, արդեն իր տանը՝ գրասեղանի առջև, փնտրում է բանաստեղծի «Մատենադրութեանց նուիրական հատորն, որ կերպիւ իւրիք իննևտասներորդ դարու Աւետարանն է Հայոց»: Փնտրում և, ավաղ, չի գտնում արդեն «հազուադիւս եղած» այդ հատորը: Սակայն չի հուսահատվում, քանզի խոստովանում է՝ «կը զգամ բանաստեղծին ոգին»⁵⁴:

Հ. Պարոնյանին Ե. Տեմիրճիպաշյանը «մեծանուն երգիծաբան» է համարում, ով «միշտ իր գրչին տէրն է»: Եվ, սակայն, ըստ նրա, «թերեւս ոչ ոք այն մեծ Ծիծաղօղին չափ զմարդ կը տրտմեցնէ»: Եղիայի գնահատությամբ՝ Հ. Պարոնյանի «երկասիրութիւնք հայելին են մեր ընկերութեան, եւ եթէ մեր ընկերութիւնն յաւէտ աւելի գեղազարդ կ'երեւի այդ հայելին մէջ, յաւէտ աւելի գեղեցիկ չ'երեւիր հոն, աւաղ ...»⁵⁵:

Պատահական չէ նաև, որ Ե. Տեմիրճիպաշյանն իր և նոր եկող սերնդի գրական քննությունն սկսում է հայ բանաստեղծության զարգացման տվյալ փուլի գնահատությունից: Ըստ այդմ իր բերկրանքն արտահայտելով մեկ տարվա ընթացքում «երբեակ քերթողական հատորները» լույս աշխարհ գալու կապակցությամբ, նկատում է, թե «Մեր նիւթավար ժամանակին արձակուենակ (prosaïque) ոգւոյն հետ անհամաձայն կը թուի սոյն բանաստեղծական վերազարթումն»: Բայց մի՞թե դա այդպես էր: Ըստ Եղիայի՝ ամենևին, որովհետև «Գրականութիւնն՝ նման գեղարուեստից՝ այլեւայլ շրջաններէ կ'անցնի յընթացս իւր զարգացման», և կարող է պատահել, որ նույնիսկ այդ «այլեւայլ շրջանաց միջեւ կամ շրջանաց մէջտեղ իսկ խաւարի, իբր ընդհատի»: Այդ երևույթը, նրա կարծիքով, բնորոշ էր նաև արդի հայ բանաստեղծությանը, երբ մի շարք հեղինակներ ստվար ժողովածուներ լույս ընծայելուց հետո, «ոչ միայն ա՛յլ եւս չհրատարակեցին, այլ եւ «քնարն իսկ թողուցին» իրենցմէ մեծագոյններէն միոյն բացատրութեամբ»: Միայն թովմաս Թերզյանն ու նրա սերնդակից Մկրտիչ Աճեմյանն էին, որ իրենց նոր քերթվածներով «մերթ ընդ մերթ» երևում էին գրական ասպարեզում: Ընդ որում՝ առաջինը, որովհետև «ի Մուսայից յաւէտ կը փայփայուի յաւերժական իւր երիտասարդութեան համար», իսկ երկրորդը, որովհետև «մանկական շնորհ մը՝ որ Աճեմեանի երկնաշնորհ ձիրքն է՝ կուգայ իր մատաղ անդամոց դողդոջիւնն յածել քնարին վրայ»⁵⁶: Մանավանդ նրա «Լոյս եւ Ստուերք» ժողովածուն վերոհիշյալ երեք հատորներից մեկն էր: Ամիսներ առաջ «Երկրագունտ»-ում ընթերցողներին ներկայացնելով այդ հատորը՝ Եղիան Աճեմյանի մասին գրում

⁵⁴ Ե. 1888, թիւ 3–4, 97–98:

⁵⁵ «Երկրագունտ», 1887, թիւ 11–12, 542:

⁵⁶ Ե. 1888, թիւ 10, 470:

էր, որ նրա «նախորդ բանաստեղծական երկասիրութիւնը մեր գրատան պատուոյ յարկաց վրայ գետեղուած են: Սրտաբուլիս, սահուն ու սրտառուչ են՝ որպէս նախորդ հաւաքածոյից՝ նոյնպէս Լոյս եւ Ստուերքի տաղերն ալ»⁵⁷:

Հաջորդ «Յուզման ժամեր» ժողովածուի հեղինակն արդեն «նոր սերնդեան հզօրագոյն բանաստեղծներէն մին» էր՝ Հովհաննես Սեթյանը, ում «հոգւոյն եւ իւր հանճարին» մասին մինչ այդ բազմիցս խոսել էր Եղիան: Սեթյանը, ըստ Տեմիրճիպաշյանի, «Վիպական դպրոցին կը վերաբերի հաստատապէս», ահա թե ինչու նրա մտահոգութեան առարկան բնութիւնը չէ «իր ամեն երեւութից ներքեւ եւ իր ներքին կազմութեան ու կազմալուծութեան մէջ, այլ բնութեան փայլուն կամ մթին մէկ երեսն»: Վերլուծելով հատորն ամբողջութեան մեջ՝ Եղիան նաեւ անկեղծորեն արտահայտում է իր իղձը կամ տեսակետը Հովհ. Սեթյանի բանաստեղծութեան զարգացման վերաբերյալ, ըստ որի՝ կտենչար, որ նա «լար մը եւս յաւելուր իւր բարձրատաւիղ բանդռան, ... կամ թէ ձուլէր բոլոր լարերն իր քնարին՝ ի մի միակ լար յոգնաճայն յոգնեալագ համադրական ...», քայլելով «այս մեր լուծման դարուն» համընթաց՝ վերլուծեւ բնութիւնը «իւր անհուն ընդարձակութեան» և բազմազանութեան, մարդկութեան հետ «յոգնադիմի յոգնախորհուրդ հաղորդակցութեանց մէջ»⁵⁸: Այսինքն՝ բնութիւնն ու մարդկութիւնը նկարագրելու նաեւ «իրենց գոհճիկ կերպարանաց մէջ, իրենց գարշելի արտայայտութեանց մէջ, իրենց մծղնէ տենդերուն մէջ...»: Բնութեան և մարդկութեան այս «հսկայ հղովամասնեայ յաւիտենական պայքարն», Տեմիրճիպաշյանի համոզմամբ, որ արդեւունք է նյութի անբաժանելի հատկութիւնը հանդիսացող շարժման, «մեծ բանաստեղծին գործոյն մէջ պարտի պատկերանալ իր ամեն փոփոխութեամբք, իր փոքրոգի ճգանց եւ իր դիւցազնական շարժմանց մէջ, ... իր յոգնահոծ ստուերց մտատանջիկ մակընթացութեան եւ իր փողփողենէջ արշաւանաց բովանդակ պայծառութեան ու վսեմութեան մէջ»: Այս ամենն ասելուց հետո Եղիան հարկ է համարում մեկ անգամ ևս ընդգծել. «Ահաւասիկ ինչ որ պարտի նոր բանաստեղծին, մեծ բանաստեղծին երգոց նիւթ ըլլալ»:

Ակնհայտ է, որ հարցադրումների այս շղթայի մեջ Ե. Տեմիրճիպաշյանն արտահայտում էր ոչ միայն հայ նոր բանաստեղծութեան իր տեսլականը, այլև բանաստեղծի մեծութեան իր չափանիշը՝ իհարկեւ, այդ ամենում չմոռանալով նաեւ «Նիրվանայի» պարագան: Նշելով, որ Հովհ. Սեթյանն՝ այլ արժանիքների հետ, ոչ միայն ունի նաեւ «բնագղներ ազնուական, տեսութիւններ վերացական», ավելին՝ «ներքնատեսութեան, ներքնակեցութեան առանձնաշնորհն ունի թերեւս առաւել քան ոչ գոք», հաստատում է, թե «գորութիւն ու լայն թեւեր ալ ունի ընդգրկելու համար կենաց տիեզերական պայքարին բոլոր համեմատութիւններն», ինչի լավագույն վկայութիւնը տվել է իր «Նիրվանա» քերթվածում⁵⁹:

Վերոհիշյալ «երբեակ քերթողական հատորներից» երրորդը Միհրան Հովհաննիսյանի «Սփոփանք ուսմկին» ժողովածուն էր: «Պատիւ ունենալով անձնապէս ճանաչել կրկին բանաստեղծներն, — գրում է Եղիան, — նոյնքան ազ-

⁵⁷ «Երկրագունտ», 1887, թիւ 11–12, 542:

⁵⁸ Ե. 1888, թիւ 10, 471–472:

⁵⁹ Ե. 1888, թիւ 10, 472–473:

նուական ու նոյնքան վերացական գտած եմ երկուքն ալ ...»։ Տարբերությունը, սակայն, այն էր, որ «առաւել երազող» էր Հովհ. Սեթյանը, որի «խօսակիցն» այդ պատճառով «տակաւ կը կորուսանէ՝ իրականութեան զգացումն», մինչդեռ Մ. Հովհաննիսյանի պարագայում «երազողն ապրողին տակ կը թաքչի, հսկելով եւ սպասելով ...»։ Վերջինս իր խառնվածքով իսկ ավելի կյանքային է, չի կտրվում իրականությունից, այնպես որ «չես խռովիր իր ներկայութենէն, իր խօսակցութենէն. յստակ անձնաւորութիւն մ'է, պայծառորոշ գիծերով, կանոնաւոր շարժամբք, ամփոփ խօսակցութեամբ, եւ իր նոյնքան լիակամ աչաց մէջ կ'ընթերցուի քան կ'երազուի կեանքն»⁶⁰։ Հատկանշական է, որ երկու բանաստեղծների ստեղծագործության միջև նկատվող տարբերությունները Եղիան պատճառաբանում էր նաև «ժամանակաց տարբերութեան ու գրական դաստիարակութեան» հանգամանքներով։ Ըստ այդմ վճռորոշ էր համարում, որ «Երբ Սեթեան սկսաւ տաղել, Հիւկոյին ի Հայս ազդեցութեան պայծառագոյն ժամանակն էր (իմա՝ վիպապաշտութեան — Պ. Դ.)», մինչ «Միհրան Յովհաննէսեան կ'երեւի 1888ին, երբ Հայ գրականութիւնն նոր հոսանքէ մը (իմա՝ իրապաշտութեան — Պ. Դ.) կը մղուի»⁶¹։

Իր «Շարժում»-ի էջերում ընթերցողներին ներկայացնելով «նորատիպ» գրական գործերը՝ Տեմիրճիպաշյանը նախ ընդգծում էր դրանց արժանիքները՝ թե՛ բովանդակության, գաղափարի և թե՛ ձևի ու ոճի տեսակետից, ապա նաև՝ տեղը գրական ընթացքի մեջ։ Այդ առումով նա բարձր է գնահատում Զմյուռնիայի «Ծաղիկ» հանդեսի նախկին խմբագիր Գրիգոր Չիլինկիրյանի «Ուղեւորութիւնն ի Կ. Պոլիս» երկը, որը հանձնարարում էր ընթերցել, քանզի «հեղինակն ազգային գործոց եւ ընկերային խնդրոց մեծ հմտութեան կը միացնէ վառվռուն ու բեղուն երեւակայութիւն, փայլուն ոճ եւ սահուն լեզու»։ Այդ հատկանիշների շնորհիվ է, որ, ըստ նրա, Գր. Չիլինկիրյանի «Ուղեւորութիւն»-ը մի գիրք է, «ոյր նմանն հագիւ հինգ-տաս տարին անգամ մը կ'երեւի մեր նոր ու չքաւոր գրականութեան մէջ»⁶²։

Տեմիրճիպաշյանն առաջիններից մեկն էր, որ նկատել ու ճանապարհ է հարթել երիտասարդ Եղիշե Դուրյանի գրական տաղանդի դրսևորման համար։ «Երկրագունտ»-ում զետեղելով Կ. Պոլսի հայոց պատրիարք Հարություն Վեհապետյանին նվիրված նրա քերթվածը՝ վերջաբան խոսքում Եղիան հիշատակում է նաև Եղիշեի ավագ եղբորը՝ Պետրոս Դուրյանին՝ ակնարկելով գրական ձիրքի ժառանգականության մասին։ «Մեր ընթերցողք սիրտ ի թունդ Դուրեան անունն Հանդիսիս էջերուն մէջ պիտի տեսնեն բանաստեղծութեան մը ներքեւ, — գրում է նա։ — Միթէ յարութիւն առաւ բիւրի՛ցս ողբացեալ այն բանաստեղծն, որ՝ քսանամեայ մահանալով անմահ երկ մը թողուց, — հրաշ՛հնչ հատոր մը կենսալիր, հառաչալիր, հանճարալիր երգոց ու թատրերգութեանց»։ Ապա, ըստ էության, հաստատելով հարության իրողությունը՝ գտնում է, որ ի դեմս Եղիշե վարդապետ Դուրյանի, «առաջնակարգ բանաստեղծ մը կը յայտնուի վերագրեալ երգոյն մէջ, նոր՝ յղացմամբ ու գոյտը՝ արտայայտութեամբ»։ Ահա, թե ինչու վստահ էր, որ «Երկրագունտ այսուհետեւ պի-

⁶⁰ Ե. 1888, թիւ 10, 473:

⁶¹ Ե. 1888, թիւ 10, 473–474:

⁶² ԳԻՇ. 1884, տետր եօթերորդ, 140:

տի վայելէ երիտասարդ այլ մեծահմուտ ու մեծատաղանդ եկեղեցականին աշխատակցութիւնն»⁶³:

Ինչ վերաբերում է Գր. Զոհրապին, ապա Տեմիրճիպաշյանը հոգովածներից մեկում («Սիրանոյշ») խոստովանում է, որ չի կարող գուշակել, թե «իւր ամբողջութեան մէջ Անհետացած սերունդն ի՞նչ պիտ'ըլլայ», – սակայն արդեն ուներ իր որոշակի կարծիքը երիտասարդ արձակագրի գրական ձիրքի մասին: Նա համոզված էր, որ «սրաչուի, սրամիտ, դրական դաստիարակութիւն ընդունած, այլեւ իւր բանաստեղծական բարեխառնութեամբ թռչնոց ու թիթուանց ետեւէն վազելով հաւէտ ուղիղ ճանապարհէն խոտորելու եւ մոլորելու կոչուած, արագ եւ առատ խօսող, արագ եւ առատ գրող, կենաց եւ էութեանց յար ետեւի կողմն որոնող, Պարոն Զոհրապ կոչուած է թերեւս Հայոց Զօլան ըլլալ»⁶⁴: Եվ որպէսզի իր այս գնահատականը լիովին հասկանալի լինի բոլոր ընթերցողներին, Եղիան հարկ է համարում ավելի մանրամասնել իր խոսքը, այսինքն շարունակում է նա «լուսանկարել կեանքն, իրերն իրենց անուամբ կոչել, առ ոչինչ գրել պատշաճութիւնն յամենայնի, ռամիկ տարրին յաղթահարել տալ ուստանիկ տարեր վրայ, մերկութիւնն նկարագրել այնքան խղճմտութեամբ որքան այլք փոյթ ունին քօղարկելու գայն»՝ եզրափակելով, թե «այս է Պարոն Զոհրապին ալ յատկանիչն»: Սակայն դա չէր նշանակում, որ նա քննադատելի ոչինչ չէր տեսնում այդ հեղինակի գրվածքներում: Նշում է, օրինակ, որոշ բնապաշտական (նատուրալիստական) հատվածների գոյությունը, որը, կարծում էր, «երիտասարդ վիպասանին յաճախ տաղտուկներ պիտ'առնէ»: Ու խոստովանում է. «Պարոն Զոհրապ յոյժ նեղացաւ երբ՝ պաշտօնիս պահանջմամբ եւ խղճիս հակառակ՝ մեղմացուցի Երկրագունտի մէջ իւր վէպին ինչ ինչ բառերն ու պարբերութիւններն»: Թյուրիմացություններից խուսափելու համար էլ ավելացնում է, թե «իւր յատուկ խնդրանաց վրայ կը յայտնեմ գայս, խրոխտ եղբայրակցիս ջերմապէս խնդակցելով այս առթիւ իւր հեշտ տաղանդին ու հարուստ շտեմարանին համար»⁶⁵:

Վերոնշյալ գրություն շարունակություն մեջ Ե. Տեմիրճիպաշյանն ուրախալի էր համարում նաև կին գրագետների ի հայտ գալու իրողությունը: «Սակայն արք չեն միայն, որք կը մատենագրեն», – փաստում է նա: Եվ դեռ ավելին. ոչ միայն՝ ստեղծագործում, այլև կանայք ևս «վիպասանական ձեւն» էին ընտրում «իրենց մտածմանց եւ գգացմանց արտայայտութեան համար»: «Մենիկ մեղամաղձոտ անուան տակ» տիկին Մելիք-Ագարյանը (իմա՝ Ծերենցի դուստրը) «Արեւելեան Մամուլ»-ում հրապարակել էր «փոքր ընտիր բարոյական վէպ մը», իսկ, ահա, «այլ Տիկին մը՝ մեծ գերդաստանի շառաւիղ, մեծ դրից ու մեծ անուան տէր, մեծամեծ ձրիւք օծտեալ եւ ամենամեծ ճակատագրի կոչեցեալ» Սրբուհի Տյուսաբը, լույս էր ընծայել «Մայտա» վեպը՝ «մատենան մը տարօրինակ անուամբ, եւ՝ ըստ ոմանց՝ տարօրինակ յաւակնութեամբ»⁶⁶: Մի երկ, որը Եղիայի խոստովանությունն էր, արդեն իսկ մեծ աղմուկ էր հարուցել ոչ միայն գրական հանրության մեջ, այլև «վեր ի վայր ընելու կոչուած էր այդ գործն ըզ Հայ ընկերություն»:

⁶³ «Երկրագունտ», 1885, թիւ 5, 236:

⁶⁴ ԳԻՇ. 1885, տետր եօթերորդ, 118–119:

⁶⁵ ԳԻՇ. 1885, տետր եօթերորդ, 119:

⁶⁶ ԳԻՇ. 1885, տետր եօթերորդ, 120:

Կարևոր է նշել, որ Ե. Տեմիրճիպաշյանը Ս. Տյուսաբի այդ երկի ծնունդը ոչ թե պատահական, այլ գրողի անցած մարդկային, ազգային-հասարակական, գրական ճանապարհի տրամաբանական արդյունքն էր համարում: «Այդ կինն՝ անմեղ աներկրային էակ մը նկատուած էր նախ, — գրում է նա, — ազգային քերթողին՝ աւաղելի Պէշիկթաշեանին ներշնչող ոգին ու պահապան հրեշտակն եղած էր. ինքն ալ քերթուհի, որ մեծահասոր անտիպ տաղարան մ'ունէր...»: Նաև հայերեն ու ֆրանսերեն լուրջ հոգովածներ էր հրատարակել, Բերայի բանաստեղծի մեջ՝ Պոլսի «ընտրագոյն ընկերութեան» ներկայութեամբ, փայլուն բանաստեղծություն էր արտասանել Հայ մատենագրության վերաբերյալ: Այդ ամենից հետո, «քաջ մ'ալ յառաջ երթալով այդ կինն ինչ պիտ'ընէր, — հարցնում է Եղիան, — Հայ իգական սեռի դաստիարակութեան ընկերութեան մը գլուխ պիտ'անցնէր. գայդ ըրած էր: Ապա ուրեմն Հայ իգական սեռի դաստիարակութեան վրայ դասական մեծ մատենան մը պիտի գրէր իբրեւ լրումն, իբրեւ պսակումն իւր գործոյն. զայդ ահա Տիկին Սրբուհի Տիւսաբէ կ'ակնկալէր Հայ ազգն»: Սակայն, «մինչ ազգն համայն այդ քաղցր ակնկալութեամբ կ'որորուէր բերկրագին, Պէշիկթաշեանի Մուսայն հեռու հեռու սլացած էր, Պալքաններն եւ Այպեաններն անցած էր, խորհրդաւոր դղեկին շուրջ կը դեգերէր եւ դղեկին անմահ բնակուհւոյն ստուերին հետ կը խօսակցէր»: Դոյալի «անմահ բնակուհին» Ժորժ Սանդն էր: Պատահական չէր, որ «երբ Մայտան երեւցաւ, — վկայում է Եղիան, — հարցուցին շատեր, թէ Ժորժ Սանդն թարգմանուած էր, թէ Էնտիանափ ու Լեյլափ հեղինակին մէկ անտիպ գործն էր», քանզի «այնքան փայլ ունէր այդ վիպասանութիւնն եւ այնքան բարձր իմաստասիրական եւ ընկերական յաւակնութիւն՝ սկսեալ յառաջաբանէն»⁶⁷:

Վերը նշված «Հավակնությունն» առնչվում էր կնոջ ազատագրության խնդրին: «Ցայն օր կանայք ուսած էին թէ պարտիք ունին, — մեկնաբանում է Եղիան, — Մայտա կը գոչէր Հայ կնոջ. «Պարտիք ունիս, Հայ կին, այլ մանաւանդ իրաւունք»: Իրաւունք ինչի՞. — լուսոյ, սիրոյ, կենաց՝ ի մի բառ»: Բանն այն էր, սակայն, որ նրա կարծիքով Ս. Տյուսաբի վեպերի բուն նշանակությունը կայանում էր ոչ թե գաղափարական, իմաստասիրական, այլ գեղագիտական բովանդակության մեջ: Տեմիրճիպաշյանի համոզմամբ, Հայ կինն այդ իրավունքները ձեռք էր բերել մինչև «Մայտա»-ի լույս աշխարհ գալը և «զայնս արդէն ի գործ կը դնէր, ... Եւրոպական ընկերութեան օրինակաւն»: Վերլուծելով Տյուսաբի «Սիրանոյշ», «Մայտա» վեպերը՝ ընդգծում էր, թե «Երբ, այսպէս, ազատ ի յուզմանէ նկատենք իրերն, յայնժամ կը փոխուի Տիկին Տիւսաբի գործոյն նշանակութիւնն: Իմաստասիրական գործ մ'ըլլալէ կը դադրի, եւ պարզապէս գրական, նկարագրական, գեղագիտական գործ մը կ'ըլլայ անի»⁶⁸:

Պատմության արդի փուլի ճշմարիտ արտացոլումը

Գրական ընթացքի մեջ Տեմիրճիպաշյանին մտահոգող խնդիրներից մեկն էլ ժողովրդի, հասարակության ժամանակակից կյանքի, պատմության ներկա փուլի բազմակողմանի ու ճշմարիտ արտացոլումն էր: Այստեղ ևս շատ բան նրան չէր բավարարում: «Պատմությունն այն գրական ճիւղն եւ կամ սեռն է,

⁶⁷ ԳԻՇ. 1885, տետր եօթերորդ, 120–121:

⁶⁸ ԳԻՇ. 1885, տետր եօթերորդ, 121–122:

որ ի մեր նախնեաց ամենէն աւելի մշակուած է», – գրում է նա: Մինչդեռ «մեր օրերն՝ ընդհակառակն՝ այդ սեռն ամենէն աւելի լքեալ, անտեսեալ է – հին թէ՛ նոր ժամանակաց համար»⁶⁹: Ջրնդունելով այն առարկութիւնը, թե ժողովրդի ներկա պատմութիւնը, նույնիսկ «օր առ օր» գրվել և գրվում է օրաթերթերում՝ նա համոզված էր, որ այդ ամենը «չեն կրնար պատմական մատենագրութիւն մը կազմել», նախ՝ որովհետեւ օրաթերթերն անցողիկ են՝ «անտառաց թերթերուն նման՝ սահմանեալ են կորստեան», և ապա՝ մեծ մասամբ չեն գրվում «գրագիտաց ձեռօք», այլեւ չխոսելով զանազան «կրից կամ այլ անորակելի ազդեցութեանց ներքեւ» գրված լինելու, դեպքերը խեղաթյուրված ներկայացնելու մասին: Ահա, թե ինչու օրաթերթային հրապարակումները «չեն կրնար ծառայել՝ ո՛չ իբրեւ աղբիւր ո՛չ իբրեւ հրահանգ եւ ո՛չ իբրեւ հեղինակութիւն»⁷⁰: Այսինքն՝ Տեմիրճիպաշյանի կարծիքով, ժողովրդի ներկա կյանքի ճշմարտացի պատկերը կարող են տալ միայն գրական որոշակի ձիրքով օժտված գրագետները՝ «թէեւ ոչ պատմագրի յաւակնութեամբ ու կարգաւորութեամբ գրուած, սակայն ժամանակակից պատմութեան վրայ լոյս սփռելու եւ հրահանգիչ ընթերցմունք ըլլալու սահմանուած» գործերը: Իսկ որպէս այդպիսին, նշված չափանիշներին համապատասխանող երկերը, ըստ Եղիայի, ընդամենը երկուսն էին՝ Մատթեոս Մամուրյանի «Հայկական նամականի»-ն և Ռեթեոս Պերպերյանի «Մարդիկ եւ Իրք»-ը: «Այդ ոսկեղինիկ մատեանք կը պատկերացնեն իրենց ժամանակն, – գրում է Եղիան, – անձինք եւ անցք իբրու լուսանկարուած են այդ գործոց մէջ, ոյց հեղինակք՝ վարժապետ ու գրագէտ միանգամայն՝ լուսոյ գործին զանձինս են նուիրած»: Սակայն այդ երկու գործերի տպավորութիւնն ու արժեքը Ե. Տեմիրճիպաշյանի համար այնքան մեծ էր, որ նա քննադատական եզրակացութիւնն ամփոփում է հետեւյալ բարձր գնահատական խոսքով. «Առասանկար ըսի. սակայն այդ պատկերք իւղանկարի արժէքն ունին, արժէքն ունին մեծ պատկերահանաց ձեռօք գծուած իւղանկարաց: Կենդանի գոյնով, անշահասէր անկողմնակալ ոգւով նկարուած ու դատուած են անդ մարդիկ եւ իրք»⁷¹:

1890-ական թվականները հայոց գրական կյանքում բնորոշվեցին նաև մի շարք բուռն բանավեճերով, որոնց մեջ փոքր չէր Ե. Տեմիրճիպաշյանի դերակատարութիւնը: Մի քանիսը նույնիսկ ուղղակիորեն առնչվում էին հենց իրեն՝ Եղիային: Պետք է ասել, որ վերջինս ոչ միայն չէր խորշում, այլև ընդունում էր բանավեճերի օգտակարութիւնը: Նման մի առիթով «Կատուի մը յիշագիրք»-ում նա գրում է. «... ես ախորժեցայ այդ գրական պայքարէն: Կը փափաքէի որ գրագէտք ամէն ժամանակ իրարու հետ վիճաբանէին հրապարակի վրայ, ուր որքան ալ գրական գործունէութիւն ըլլայ, միօրինակութիւն կը տիրէ միշտ առանց վիճաբանութեան»⁷²:

Եզրակացութիւն

Եղիա Տեմիրճիպաշյանը XIX դ. երկրորդ կեսի արեւմտահայ գրականութեան ինքնատիպ դեմքերից է: Նրա բազմաբնույթ հետաքրքրութիւնների մեջ

⁶⁹ ԳԻՇ. 1885, տետր երկոտասաներորդ, 212:

⁷⁰ ԳԻՇ. 1885, տետր երկոտասաներորդ, 212–213:

⁷¹ ԳԻՇ. 1885, տետր երկոտասաներորդ, 213–214:

⁷² «Երկրագունտ», 1888, թիւ 11, 496:

կարևոր տեղ է գրավում գրական քննադատությունը: Տեսական բնույթի մի շարք հրապարակումներում հանգամանորեն քննելով բանաստեղծի ու բանաստեղծության էության բնորոշման խնդիրները՝ այդ ամենը նա փորձել է հիմնավորել դասական և ժամանակակից գրողների երկերի վերլուծությամբ ու գնահատությամբ: Քննադատական հոդվածներում հիմնավոր անդրադարձ է կատարել նաև գրական քննադատության անհրաժեշտության, ընթացիկ գրականության գնահատության չափանիշների, պատմության արդի փուլի ճշմարիտ արտացոլման հիմնահարցերին:

Ե. Տեմիրճիպաշյանն առանձնապես կարևորում էր բանավեճերի դերը՝ քննադատական մտքի աշխուժացման, գրական կյանքում միօրինակությունից խուսափելու համար:

Պետրոս Դեմիրճյան – Բ. Գ. Դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության, գրականագիտական և գրաքննադատական բազմաթիվ հոդվածների: ORCID:0009-0003-6265-4421. pdemirchyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բաշալեան Լ. 1887, Գրական սուրհանդակ. – «Երկրագունտ» (Կ. Պոլիս), թիվ 11–12, էջ 472–480:

Գրական եւ իմաստասիրական շարժում (Կ. Պոլիս). 1884, տետր եօթերորդ. – Մատենախօսական, էջ 140:

Գրական եւ իմաստասիրական շարժում. 1884, տետր իններորդ. – Մանուկն եւ ազգն (ազգային բարեշրջութիւն), էջ 168–173:

Գրական եւ իմաստասիրական շարժում. 1884, տետր մետասաներորդ. – Անվերնագիր՝ Գ. Լուսինյանի նամակի առիթով, էջ 202–205:

Գրական եւ իմաստասիրական շարժում. 1884, տետր երկուտասաներորդ, Գրադատութեան պակասութիւնն, էջ 225–229:

Գրական եւ իմաստասիրական շարժում. 1884, տետր երկուտասաներորդ. – Երրորդ Ներսիսեան ուսումնարանն, էջ 229–234:

Գրական եւ իմաստասիրական շարժում. 1885, տետր վեցերորդ. – Կատուի մը յիշագիրք (Վիգդօռ Իւկօ), էջ 107–115:

Գրական եւ իմաստասիրական շարժում. 1885, տետր եօթերորդ. – Սիրանոյշ, էջ 117–125:

«Գրական եւ իմաստասիրական շարժում. 1885, տետր ութերորդ. – Մահ, Կեանք, Առաւելիմութիւն, Դպրոց, էջ 150–156:

Գրական և իմաստասիրական շարժում. 1885, տետր տասներորդ եւ մետասաներորդ. – Հիվանդութիւնս, էջ 177–178:

Գրական եւ իմաստասիրական շարժում. 1885, տետր երկուտասաներորդ. – Ռ. Յ. Պէրպէրեան, Մարդիկ եւ Իրք, էջ 212–214:

Գրական եւ իմաստասիրական շարժում. 1886, տետր երկրորդ. – Առաջնորդական խնդիր, էջ 17–22:

- Ե. 1886, Վարք երեւելի արանց. – «Երկրագունտ», թիւ 1, էջ 34–36:
- Ե. 1887, Մրցանակ Սահակ Մեսրոպեան. – «Երկրագունտ», թիւ 9–10, էջ 353–359:
- Ե. 1887, Դրական հաւատք (Ազգային խօսակցութիւնք). – «Երկրագունտ», թիւ 9–10, էջ 377–383:
- Ե. 1887, Հասգիւղ. – «Երկրագունտ», թիւ 9–10, էջ 402–407:
- Ե. 1887, Զարգացումն հայ մտաց և հայ լեզուի. – «Երկրագունտ», թիւ 11–12, էջ 449–456:
- Ե. 1887, Վենետիկ. – «Երկրագունտ», թիւ 11–12, էջ 509–510:
- Ե. 1888, Լսարան Ասիական ընկերութեան. – «Երկրագունտ», թիւ 3–4, էջ 97–106:
- Ե. 1888, Յովհաննէս Սեբեան. Յուզման ժամեր (Քերթուածք). – «Երկրագունտ», թիւ 6, էջ 275–276:
- Ե. 1888, Մեր պարբերական մամուլը. – «Երկրագունտ», թիւ 6, էջ 277–281:
- Ե. 1888, Սփոփանք ռամկին. – «Երկրագունտ», թիւ 10, էջ 468–474:
- «Երկրագունտ», 1884, թիւ 4, էջ 188–191:
- «Երկրագունտ», 1885, Վերջաբան խոսք Եղիշէ Վ. Դուրեանի «Երգ...» քերթվածին, թիւ 5, էջ 234–236:
- «Երկրագունտ», 1885, Հիւանդին բարեկամը, թիւ 7, էջ 337:
- «Երկրագունտ», 1887, Նոր հրատարակութիւնք, թիւ 11–12, էջ 541–542:
- «Երկրագունտ», 1888, Կատուի մը յիշագիրք, թիւ 11, էջ 493–497:
- Թէոդիկ. 1923, Ամենուն Տարեցոյցը, Կ. Պոլիս, տպ. Մ. Յովակիմեան, էջ 62–64:
- Թովիշյան Ստ. 1987, Կերպ և իսկություն, Երևան, «Սովետական գրող», 488 էջ:
- «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1893, թիւ 413:
- Հուր Հայրան. 1899, Ի՞նչ է բանաստեղծութիւնը. – «Մասիս» (Կ. Պոլիս), թիւ 7, էջ 204–207:
- Հուր Հայրան. 1899, Անձնական եւ անանձն բանաստեղծութիւն. – «Մասիս», թիւ 8–9, էջ 247–249:
- Մշակ. 1880, Հատընտիր ընթերցուածք ազգային եւ օտար մատենագիրներէ քաղուած (Ընտանեաց եւ դպրոցաց համար), Կ. Պոլիս, Տպ. Արամեան, 32 էջ:
- Չերազ Մ. 1929, Կենսագրական միւսիոններ, Ամբողջական երկեր, թիւ Գ, Փարիզ, «Օշական» հրատ., 76 էջ:
- Սիմէր Հ. (Սիմէոն) Երեմեան. 1913, Ազգային դէմքեր (Գրագէտ հայեր), 4-րդ շարք, Վենետիկ, Տպ. Ս. Ղազար, 203 էջ:
- Տէմիրճիպաշեան Ե. 1885, Վիզդօռ Իւկօ. – Գրական և իմաստասիրական շարժում, տետր վեցերորդ, էջ 97–100:
- Տէմիրճիպաշեան Ե. 1891, Բանաստեղծութիւն եւ ամուսնութիւն (յոռետեսի մը խնդակցութիւնք). – «Արեւելք» (Կ. Պոլիս), թիւ 2271:
- Տէմիրճիպաշեան Ե. 1893, Զարգացումն «ես»ին. – «Մասիս», թիւ 3982, էջ 146–148:
- Տէմիրճիպաշեան Ե. 1986, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 536 էջ:
- Տէմիրճիպաշեան Ե. 2015, Անգեղն երգ (բանաստեղծութիւններ), Երևան, «Սարգիս Խաչենց Փրինթինգ», 448 էջ:
- Օշական Յ. 1980, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 8, Անթիլիաս, 503 էջ:
- Ֆէնէրեան Գ., Պետրոսեան Հր. 1921, Եղիա Տէմիրճիպաշեան. Իր կեանքը եւ իր գործը, Կ. Պոլիս, 207 էջ:

Ֆույլէ Ա. 1887, Բարենորոգումն իմաստասիրական ուսուցման. – «Երկրագունտ», թիւ 11–12, էջ 480–484:

ЛИТЕРАТУРНЫЙ КРИТИК ЕГИЯ ТЕМИРЧИПАШЯН

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Резюме

Ключевые слова: Егия Темирчипашян, литературный критик, «Еркрагунт», искусство, жанр, поэзия, роман, душа, тело, творческая свобода.

Егия Темирчипашян (1851–1908) – западноармянский писатель, философ, педагог, редактор, один из самобытных деятелей новой армянской литературы второй половины XIX века – помимо теоретических вопросов, в ходе своей публицистической деятельности, естественно, занимался и проблемами литературной критики. В многочисленных публикациях теоретического характера Темирчипашян, подробно исследуя «Что такое поэзия», в частности «личная и безличная литература», анализировал необходимость литературной критики, критерии оценки современной литературы, проблемы истинного отражения современного этапа истории, на основе всего этого выражая свое отношение и оценку творчества классических и современных писателей.

В 1890-е годы литературная жизнь Армении характеризовались напряженными дискуссиями, в которых Е. Темирчипашян играл немаловажную роль. Он не только не избегал споров, но и признавал их полезность, будучи убежден, что в литературной жизни «всегда царит однообразие без дискуссий».

Петрос Демирчян – д. филол. н., ведущий научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абега НАН РА. Научные интересы: классическая и современная литература. Автор 3 монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей. ORCID: 0009-0003-6265-4421. pdemirchyan@mail.ru

YEGHIA TEMIRCHIPASHYAN AS A LITERARY CRITIC

PETROS DEMIRCHYAN

Summary

Keywords: Yeghia Temirchipashyan: literary critic, “Yerkragunt”, art, poetry, novel, soul, body, creative freedom.

Yeghia Temirchipashyan (1851–1908) is a Western Armenian writer, philosopher, teacher, and editor. He is one of the original figures of the new Armenian literature of the second half of the XIX century; in addition to theoretical issues, in the course of his journalistic activity, naturally, he also dealt with the problems of the literary criticism. In his numerous publications of theoretical nature, Temirchipashyan thoroughly studied the issue “What is poetry”, in particular, “personal and impersonal literature”, analyzed the need for literary criticism, criteria for evaluating the contemporary literature, problems of true reflection of the modern stage of history. On the basis of all this, he expressed his attitude and appreciation of the works of the classical and modern writers.

In the 1890s, the literary life of Armenia was characterized by intense discussions, in which E. Temirchipashyan played an important role. Not only did he not avoid disputes, but also recognized the usefulness of debates, being convinced that in literary life “there is always monotony without discussion”.

Petros Demirchyan – Doctor of Philological Sciences. Senior Researcher at the Department of Modern Armenian Literature of the Institute of Literature after M. Abeghian of NAS RA. Scientific interests: classical and modern literature. Author of 3 monographs, numerous literary, literary-critical articles. ORCID:0009-0003-6265-4421. pdemirchyan@mail.ru